

## Հակառակ Ձինադարարի Շուրջ Գոյացած Համաձայնութեան Ծանր Մարտերը Տակաւին Կը Շարունակուին Արցախի Սահմաններու Երկարութեան

Հոկտեմբեր 9-ին, Մոսկուայի մէջ տասը ժամ տեւող բանակցութիւններէն ետք, որուն կը մասնակցէին Հայաստանի, Ատրպէյճանի եւ Ռուսաստանի արտաքին գործոց նախարարները, կողմերը համաձայնութեան եկած էին մարդասիրական գինադարար յայտարարելու շուրջ, որ գործադրութեան պիտի դրուէր յաջորդ օրը՝ Հոկտեմբեր 10-ի ճիշդ կէսօրին:

Հակառակ այս համաձայնութեան, Ատրպէյճանական կողմը կը շարունակէ հրթիռակոծել Արցախի մայրաքաղաք Ստեփանակերտը եւ այլ բնակելի վայրեր, խլելով խաղաղ բնակիչներու կեանքերը:

Թշնամին նաեւ կը փորձէ հսկողութեան տակ առնել հայկական որոշ դիրքեր եւ յատկապէս Հաղուծ քաղաքը, որու գրամման մասին յայտարարած էր նախագահ Հէյտար Ալիևը:

Մասնաձիբ բոլոր ճակատներուն վրայ Հայկական Բանակի

զինուորները կը շարունակեն ցուցաբերել հերոսական դիմադրութիւն, ճախողութեան մատնելով թշնամիի բոլոր յառաջխաղացումները:

Հաղորտը կը գտնուի Հայկական Ձինուած Ուժերու Վերահսկողութեան Տակ, Իսկ Թալիշը Չէ Գրաւուած

Ռազմաճակատներու վրայ տիրող կացութեան մասին իր ամէնօրեայ ասուլիսներուն ընթացքին, Արցախի Պաշտպանութեան Բանակի ներկայացուցիչ Արծրուն Յովհաննիսեանը յայտարարարեց. «Մոսկուայում ձեռք բերուած պայմանաւորութիւններն ատրպէյճանական կողմը բացարձակ չի կատարել եւ չի էլ պատրաստուել կատարել: Ատրպէյճանի ղեկավարութեան յայտարարութիւններն այն մասին, որ նրանք պատրաստակամ են եղել կատարելու այդ պայմանաւորութիւնները, լիովին կեղծիք են:



Ինչ-ինչ պատճառներով փորձուած են ապակաշունացնել իրավիճակը եւ սանձազերծել մարտական գործողութիւնները», - ըսաւ ան:

Ըստ Յովհաննիսեանի, յարձակողական գործողութիւնները կը

կատարուին երեք-չորս ուղղութիւններով: Մասնաւորապէս, Մարտակերտի ուղղութեամբ կիրառած են նաեւ ծանր հրետանային միջոց-

Շար.ը էջ 5

## ՄԴՀԿ Կը Զօրակցի Ծօ Պայտընին՝ Որպէս Ամերիկայի Յաջորդ Նախագահ



Այս օրերուն տեղի կ'ունենան Միացեալ Նահանգներու պատմութեան ամենէն հետեւանքային ընտրութիւններէն մէկը, որ պիտի գայ ճշդելու երկրի ապագան, ոչ միայն յաջորդ չորս տարիներուն, այլ՝ տասնամեակներուն համար:

Միլիոնաւոր քուէարկողներ արդէն իսկ սկսած են իրենց ձայնը լսելի դարձնել փոստային եւ կամ կանուխ քուէարկութեամբ, իսկ Նոյեմբեր 3-ին, տասնեակ միլիոնաւոր քաղաքացիներ ներկայանալով քուէատուփեր պիտի քան վճռելու յաջորդ նախագահի անունը:

Մենք այս ընտրութիւններուն կը մօտենանք մեկնելով Հայաստանի ու Արցախի պաշտպանութեան տեսանկիւնէն, Ամերիկահայութեան շահերէն, եւ մեր Կուսակցութեան գաղափարական սկզբունքներէն:

Այս օրերուն Արցախի ինքնիշխանութեան դէմ շղթայագերծուած պատերազմը եւ թրքական զինուած ուժերու գործնական մասնակցութիւնը ռազմական գործողութիւններուն կը մտահոգեն բոլորիս: Խիստ կարեւոր է որ Սպիտակ Տան ղեկավարը հետաքրքրութիւն ցուցաբերէ տարածաշրջանի իրադարձութիւններուն նկատմամբ եւ դիմէ գործնական քայլերու՝ խաղաղութիւն հաստատելու ուղղութեամբ:

Համոզուած ենք որ, Ծօ Պայտընի վարչակազմը պիտի օգտագործէ Ամերիկայի հեղինակութիւնն ու իսկապէս միջոցները՝ կանխելու համար Ատրպէյճանի եւ Թուրքիոյ ցեղասպանական նպատակները, դադարեցնելու յարձակումները Արցախի խաղաղ բնակչութեան դէմ եւ զսպելու Թուրքիոյ

Շար.ը էջ 19

## Տասնեակ Հազարաւոր Հայերու Բողոքի Ցոյցը Թրքական Հիւպատոսարանին Դիմաց



Տասնեակ հազարաւոր ցուցարարներ թրքական հիւպատոսարանին դիմաց

Տասնեակ հազարաւոր Ամերիկահայեր եւ Հայութեան բարեկամներ Կիրակի, Հոկտեմբեր 11-ին տողանցեցին դէպի Պէվլըրլի Հիւզի մէջ գտնուող Թրքական Հիւպատոսութիւն՝ ի նշան համերաշխու-

թեան Հայաստանին եւ Արցախին եւ առ ի բողոք թրքական բացառապատ միջամտութեան՝ ռազմական գործողութիւններուն:

Շար.ը էջ 2

**ԳՈՅԺ**

Ս.Դ.Հ.Կ. Կեդրոնական Վարչութիւնը խոր ցաւով կը գուժէ իր երկարամեայ նախկին անդամներէն ԸՆԿ. ՏԻԳՐԱՆ ՍԱՐԱՅԵԱՆ-ի մահը, որ պատահեցաւ 7 Հոկտեմբեր 2020-ին, Միացեալ Նահանգներու մէջ Ս.Դ.Հ.Կ. Կեդրոնական Վարչութիւն



**ՎԱՅԱՍԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ**

**Ատրպեյճա՞ն, Թե Ահաբեկի՞չ.  
Արցախի Կոչը Ռուսաստանին Ու Իրանին**

ԱՐԱՍ ԱՄՍՏՈՒՆԻ

Արցախի խորհրդարանը կոչ է արել Ռուսաստանին եւ Իրանին ստեղծել հակահաբեկչական կենտրոն, Ատրպեյճան անաբեկիչ վարձկանների ներգրավման դէմ պայքարի եւ ռեզիտոն անաբեկչական խմբավորումների որջի վերածելու թուրքական քայլերի դէմ: Քիչ հաւանական է, որ Արցախի խորհրդարանի կոչը գտնի արձագանք Ռուսաստանում եւ Իրանում, որտեղ Արցախը ճանաչուած պետութիւն չէ: Միւս կողմից, սակայն, Իրանն ու Ռուսաստանը փաստացի ճանաչել են, որ Ատրպեյճանն է վերածուած անաբեկչական ճամբարի: Ռուսաստանը դա արձանագրել է արտաքին հետախուզութեան ծառայութեան պետի մակարդակով, որը խօսել է յստակ տուեալների առկայութեան մասին:

Անաբեկչական վտանգի անթոյլատրելիութեան մասին խօսել է նաեւ Թեհրանը: Բազմիցս նշել ենք այս օրերին, որ անաբեկիչները այսօր են կուռում Արցախի դէմ, սակայն դրանց ներկրման ռազմավարական նպատակը Իրանի եւ Ռուսաստանի դէմ վաղուայ կռիւն է, որ պատրաստուած է թուրքիան: Ըստ այդմ, Իրանն ու Ռուսաստանը կարող են ամենեւին չարձագանքել Արցախի խորհրդարանի

կոչին, եւ պէտք էլ չէ ուղիղ որեւէ արձագանք: Բայց կարո՞ղ են չարձագանքել անաբեկչական վտանգին, որ ուղիղ իմաստով այլեւս առկայ է ռեզիտոնում: Այստեղ է հարցը, եւ Արցախի խորհրդարանի ու նաեւ ընդհանրապէս այս օրերին պաշտօնական Երեւանի մակարդակով անգամ հնչող անաբեկչութիւնները: Ըստ այդմ՝ հնարաւոր չէ մի կողմից արձանագրել, որ դէ իւրէ այդպիսի պետութեան տարածքում տեղակայուած են անաբեկիչներ, միւս կողմից՝ այդ պետութիւնը դիտարկել գործընկեր կամ յարաբերութեան սուբեկտ: Պէտք է կողմնորոշուել՝ Ատրպեյճա՞ն, թե՛ անաբեկիչ:

Եթէ անաբեկիչ, ապա էլ ինչ Ատրպեյճան: Իսկ Ռուսաստանն ու Իրանը եւ, ի հարկէ, ոչ միայն նրանք, արձանագրել են, որ կան անաբեկիչներ: «ԱՌԱՋԻՆ ԼՐԱՏՈՒԱԿԱՆ»

**Ինչը Ստիպեց Ալիեւին Համաձայնել Բանակցութիւններին**

Մոսկուայում հրադարարի պայմանաւորուածութեան վերաբերեալ փաստաթղթում չկան այն պահանջները, որոնք դնում էր ապշերոնյեան յանցամբի պարագլուխ Ալիեւը, մասնաւորապէս՝ թուրքիայի մասնակցութիւնը բանակցութեանը: Իր հերթին, Միւսկի իմբի համանախագահ Ֆրանսիան Բաքուի հետ բանակցութիւններում նշել էր տարածքներ կարգավիճակի դիմաց բանաձեւը, որն այլ կերպ կոչուած է Մադրիդեան փաստաթուղթ: Բաքուն դէմ է ոչ միայն Ղարաբաղի կարգավիճակին, այլեւ յայտարարում էր, որ մինչեւ հայկական զօրքերը դուրս չգան՝ պատերազմը չի աւարտուի, բանակցութիւններ չեն լինի: Հիմա յայտարարում է, որ վաղն իսկ պատրաստ է բանակցել:

Հարց է առաջանում, թէ այդ պարագայում ինչն է ստիպել Ալիեւին համաձայնել այդ փաստաթղթին: Ըստ հուլիանի, եթէ Բաքուն կողմ լինէր այդ տարբերակին, պատերազմ չէր սկսի:

Միւս կողմից, ներկայում արդէն պարզ է, որ նա պատերազմը սկսել է թուրքիայի դրոյմամբ, որի դիմաց Անկարան խոստացել է պահել Ալիեւի իշխանութիւնը եւ ստանձնել պատերազմի կառավարումը: Թուրքիան այս պատերազմով ցանկանում է լուծել ինդիքները լայն շրջանակ՝ Միջերկրկանից մինչեւ Կովկաս, իր միջազգային դիրքերն ամրապնդելու եւ հեռուն գնացող ծրագրերն իրագործելու համար:

Ակնյայտ է, որ Բաքուն ռազմական առումով չի կարողացել լուծել իր համար հիմնական ինդիքը: Դրանով են բացատրուած հրադարարի յայտարարումից յետոյ նոր յարձակումները՝ դիրքային բարելավումների հասնելու նպատակով, եւ ինչ որ գիւղեր «ազատագրելու» մասին հաղորդագրութիւնները Բաքուի լրատուամիջոցներում:

Բացի այդ, պատերազմի շարունակման պայմաններում առանմիջապէս, յաջորդ օրուանից պէտք է վերանայուի թաւիշը, նոր քաղաքականութիւն որդեգրուի, որը արագ կ'ապահովի բանակի էական վերագիւնում: Ներդրումային դաշտի, բիզնես միջոցորտի եւ այլ ճոխութիւնների մասին ժամանակաւորապէս պէտք է մոռանալ՝ առաջնային դարձնելով բանակի գիւնամթերքի համալրումը: «ՉՈՐՐՈՐԴ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ»

**Քաղաքականութեան Վերանայման Հրամայականը**

ԱՐԻՍ ՎԱՂԱՐՇԱԿԵԱՆ

Ի հարկէ ժամանակը չէ: Ի հարկէ այս ամէնին պէտք է անդրադառնալ պատերազմից յետոյ: Բայց նաեւ պէտք է արձանագրել, որպէսզի յետպատերազմեան օրակարգը յստակ լինի:

Հայաստանի մեծահարուստները, յամենայն դէպս նրանց մեծամասնութիւնն անհաղորդ մնաց պատերազմին եւ դրա արդիւնքում ստեղծուած ճգնաժամին: Բացառութեամբ մի քանի հոգու, մնացածը չցանկացան դատարկել իրենց քսակները եւ օգնութիւն տրամադրել հայրենիքին: Այն հայրենիքին, որի շնորհիւ միլիարդաւոր դոլարներ են դիզել: Յատկապէս, եթէ հաշուի առնենք, թէ ինչպէս են հարստացել եւ ինչ պայմաններում:

Եթէ հայկական ծագումով հայաստանցի մեծահարուստներից բան պահանջելը պարապ գբաղմունք է, ապա Հայաստանում ապրողները եւ խոշոր բիզնես ծաւալողները պէտք է մի փոքր այլ վարքագիծ դրսեւորեն:

Բայց ոչ, նրանք նախընտրեցին, օրինակ, 5 դատարկ ֆուտ տրամադրել հաւաքուած օգնութիւնը Արցախ տանելու համար: Մի մասը ընդհանրապէս այլ կրեատիւ լուծում գտաւ. իրենց տիրապետութեան տակ գտնուող մեղիաներով տեղեկատուութիւն տիրաժապորել, թէ բա չգիտէք՝ այդ մարդիկ ինչեր են արել, պարզապէս չեն ցանկանում հանրայնացնել: Հետաքրքիր է, թէ այդ ինչ օգնութիւն է, որ չարժի հանրայնացնել: Ինչ է՝ գէնքը ազատ վաճառուած է եւ այն էլ ժամանակակից գէնքի տեսակները, որ մտան գնեցին եւ ուղարկեցին ճակատ:

Հէքիաթ պատմել պէտք չէ: Գուցէ մի քանիսն ուտեն խայծը, բայց մտածող մարդկանց մօտ դա միայն քմծիծաղ կ'առաջացնի:

Խնդիր ունի նաեւ իշխանութիւնը եւ պէտք է արձանագրել, որ դա նրա դանդաղկոտութեան եւ անհեռատեսութեան պատճառով է: Թաւիշը պէտք էր դէն նետել 2018 թուականի ամռանը եւ սկսել թաւանուած միջոցների կոնկրետ վերադարձ: Մաքսիմալիստական թուէր չհնչեցնենք, բայց գոնէ մէկ միլիարդը լրիւ իրատեսական թիւ էր: Այդ գումարով հնարաւոր կը լինէր գնել ԱԹՍ-ների մեծ խմբաքանակ, եւ այսօր լուրջ վնասներ կը հասցուէին թշնամու գիւնանոցին: Դրա փոխարէն 2.5 տարի անց ունենք դեռ չաշխատող ապօրինի գոյքի բռնագանձման մասին օրէնք, որը դեռ մի դոլար չի վերադարձրել պետական բյուջէ:

Պատերազմի աւարտից յետոյ

**Տասնեակ Հազարաւոր Հայերու**

Շարունակուած էջ 1-էն

Չանգուածային երթը սկսաւ Ֆեյրֆաքսի շրջանի «Փասաֆիք Փարքէն» ուղղուելու համար դէպի Պէվլըրլի Հիլզ, ուր ցուցարարները կը ծածանէին Հայաստանի ու Արցախի դրօշները եւ կը բարձրացնէին Ատրպեյճանն ու թուրքիան դատապարտող ցուցա-

նակներ, որոնց վրայ գրուած էին. «Հայաստանը խաղաղութիւն կ'ուզէ», «Արցախը Հայաստան է» եւ «Թուրքիան մեղաւոր է պատերազմական յանցագործութիւններում մէջ»:

Լոս Անճելոսի ոստիկանութեան գնահատմամբ՝ հարիւր հազարէ աւելի մարդ մասնակցած է խաղաղ երթին:

Հրատարակելով հայաստանեան մամուլին մէջ լոյս տեսնող տարբեր յօդուածներ «ՄԱՍԻՍ» անպայմանօրէն չի բաժնի հոն արտայայտուող բոլոր միտքերը

[www.massispost.com](http://www.massispost.com)

Չանայու է լուրջ ինդիք, որը թերեւս ամենակարեւորն էր Բաքուի որոշման պարագայում: Բանն այն է, որ Բաքուն գիշերով առաջին մակարդակում՝ ցամաքային, փորձում է օգտագործել իր առաւելութիւնն օդում: Միեւնույն ժամանակ, եթէ Բաքուն այսպէս ասած սպառել է իր պոտենցիալը, հայկական կողմը երրորդ մակարդակում ունի առաւելութիւն, որում Բաքուն համոզուել է Արցախի քաղաքները հրետակոծելուց յետոյ: Չուր չէ, որ թուրքիայի արտգործնախարարը Լավրովին ինդիք էր գտել հայկական կողմին: Բաքուի յանցախումբն իրական ռեժիմում կանգնած է հարցի առաջ՝ սեփական ժողովրդին բացատրել, թէ ինչի համար էին հազարաւոր գոհերն ու ավերածութիւնները, եթէ պէտք է վերադարձ լինի բանակցային ելման կէտին:

Ի դէպ, այս մասին պէտք է մտածի նաեւ հայկական ռազմաքաղաքական ղեկավարութիւնն ու դիւանագիտութիւնը, այդ առաւելութիւնը ամուր փաստարկով կապիտալիզացնելու համար: Ըստ ամենայնի, առջեւում բանակցային երկար գործընթաց է լինելու, հաւանական է ռազմական գործողութիւնների շարունակման ֆօնին, եւ հայկական կողմը լրջօրէն պէտք է մտածի Արցախի հարցում 1989 թ. որոշումն իրագործելու կամ անկախութիւնը ճանաչելու մասին: Կարգավիճակը կարեւորագոյն ինդիք է, սակայն՝ նայած ինչ կոնֆիդուրացիայով եւ պայմաններով: «ԼՐԱԳԻՐ»



**ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ**

ՊԱՇՏՏՍԱԹԵՐԹ՝  
ՍՈՅՒԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱԿԵԱՆ  
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ  
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ  
ԳՐԻԳՈՐԽՈՏԱՆԵԱՆ

ՎԱՐԻՉ ՏՆՕՐԵՆ  
ՎԱՐԷ ԱՋԱՊԱՅԵԱՆ

**MASSIS Weekly**  
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA  
1060 N. Allen Ave.  
Pasadena, CA 91104  
Phone: (626) 797-7680  
Fax: (626) 797-6863  
E-Mail: massis2@earthlink.net  
<http://www.massisweekly.com>

(USPS 667-310) (ISSN 0744-334X)  
Published Weekly  
Except Two Weeks in August

**ANNUAL SUBSCRIPTION RATES:**  
USA \$50.00, \$100.00 (First Class)  
Canada \$125.00 (Air Mail)  
Overseas \$250.00 (Air Mail).  
All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid  
at Pasadena CA.  
Please Send Address Change To  
**MASSIS WEEKLY**



**ՐԱՅԱՍԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ**

**Փաշինեանի Հանդիպումը Արտախորհրդարանական Քաղաքական Ուժերու Ներկայացուցիչներուն Հետ**



Վարչապետ Նիկոլ Փաշինեանի հանդիպումը քաղաքական ուժերու ներկայացուցիչներուն հետ

Վարչապետ Նիկոլ Փաշինեան կառավարութեան ներսահանդիպում ունեցած է արտախորհրդարանական քաղաքական ուժերու ներկայացուցիչներուն հետ:

Կառավարութեան տեղեկատուութեան եւ հասարակայնութեան հետ կապերու վարչութեան հաղորդմամբ, վարչապետը անդրադարձած է Ատրպէյջանի կողմէ թուրքիոյ անմիջական աջակցութեամբ սանձազերծուած պատերազմի հետեւանքով ստեղծուած իրավիճակին, կառավարութեան քայլերուն եւ գործողութիւններուն, անոնց կարգին՝ դիւանագիտական ասպարէզին ներս, ինչպէս նաեւ պատասխանած է շարք մը հարցերու:

Քաղաքական ուժերու ներկայացուցիչները ներկայացուցած են իրենց դիտարկումներն ու առաջարկութիւնները Ատրպէյջանի դէմ պայքարի եւ հետագայ քայլերու ուղղութեամբ:

Հանդիպման կը մասնակցէին առաջին նախագահ Լեւոն Տէր Պետ-

րոսեանի ղեկավարած «Հայ Ազգային Գոնկրէս»-ի փոխնախագահ՝ Լեւոն Զուրաբեանը, «Հանրապետութիւն» կուսակցութեան ղեկավար՝ Արամ Սարգսեանը, Հայաստանի ժողովրդական կուսակցութեան նախագահ Ստեփան Դեմիրճեանը, ՍԴՀԿ վարչութեան ատենապետ Արսէն Գիւլիէլեանը, նախկին իշխող ուժի՝ «Հանրապետական» կուսակցութեան խօսնակ՝ Խառատ Շարմազանովը, ՀՅԴ Գերագոյն մարմնի ներկայացուցիչ՝ Իշխան Սաղաթէլեանը, «Յանուն հանրապետութեան» կուսակցութեան ղեկավար՝ Արման Բաբաջանեանը, «Քաղաքացու Որոշում» կուսակցութեան գործադիր մարմնի քարտուղար՝ Սուրէն Սահակեանը եւ «Սասնա ծռեր» կուսակցութեան համակրող վարուժան Ալեւտիսեանը:

Զրուցակիցները ողջունած են նման ձեւաչափով միտքերու փոխանակութիւնը: Նշուած է, որ կախուած իրավիճակէն՝ նմանատիպ հանդիպումները կրնան կրել շարունակական բնոյթ:

**Փաշինեան Պատգամաւորներու Հետ Քննարկած Է Արցախի Մէջ Ստեղծուած Իրավիճակը**

Վարչապետ Փաշինեան խորհրդարանի նախագահի, խմբակցութիւններու ղեկավարներու եւ մշտական յանձնաժողովներու նախագահներու հետ փակ հանդիպում ունեցած է: Ներկայ եղած է նաեւ արտաքին գործոց նախարար՝ Զոհրապ Մնացականեան:

«Արցախ այցից յետոյ, կարծում եմ, ամբողջական տեղեկատուութեանը մենք տիրապետել ենք, եւ վարչապետի հանդիպումից յետոյ էլ, եթէ ինչ-որ բան բաց է մնացել, դրան էլ իրազեկուել ենք: Իրավիճակը շատ բարդ է, պատերազմ է, եւ այս պահին մարտի դաշտում որոշուած է մեր պետութեան ճակատագիրը», - ըսաւ Մարուքեան:

Մասնակիցները վարչապետի հետ փակ հանդիպումի մասին բովանդակային մանրամասնութիւններ չբացայայտեցին:

Տարածաշրջանային եւ եւրասիական ինտեգրման միաձուլման հարցերու յանձնաժողովի նախագահ, ընդդիմադիր «Բարգաւաճ Հայաստան»-էն Միքայէլ Մելքոնեան փոխանցեց, որ Նիկոլ Փաշինեան եկած է Ազգային ժողով, հանդիպումն ալ տեւած է մօտ

երկու ժամ: Մելքոնեան ըսած է, թէ լուծման ուղիներու վերաբերեալ վարչապետը դիրքորոշում չայտնած է:

Արդեօք ԲՀԿ-ի համար ընդունելի՞ է այն, Մելքոնեան պատասխանեց. «Ընդունելի-չընդունելի հարց չկայ այտեղ: Կայ ստեղծուած իրավիճակի քննարկում, որ բոլոր պիտենք, եւ ելքեր, թէ ինչ պէտք է անենք, որ հակընդդէմ այդ բանը գտանք, այդքան բան»:

«Բաց խօսակցութիւն էր», - հանդիպման մասին ըսած է Եւրոպական միաձուլման մշտական յանձնաժողովի նախագահ Իշխանական Արման Եղոյեան:

«...Վարչապետը պատասխանեց բոլոր-բոլոր հնարաւոր հարցերին: Այսինքն բոլոր երեք խմբակցութիւնները, ինչ հարց կարող էին ունենալ, այդ բոլորին վարչապետը պատասխանեց», - ըսաւ Եղոյեան:

Լեւոնային Ղարաբաղի նախագահը յայտարարած էր՝ եթէ յառաջիկայ երկու օրերուն Ատրպէյջանը չպահպանէ հրադադարի վերաբերեալ Մոսկուայի պայմանաւորուածութիւնը, կը դիմէ Հայաստանին, նաեւ այլ երկիրներու, ճանաչելու Արցախի անկախութիւնը:

**Արման Տիլանեանը Ընտրուած Է Սահմանադրական Դատարանի Նախագահ**

Հոկտեմբեր 12-ին, ՀՀ Սահմանադրական դատարանի աշխատակարգային նիստի ընթացքին տեղի ունեցած է Սահմանադրական Դատարանի նախագահի ընտրութիւնը, որու հետեւանքով Արման Տիլանեանը ընտրուած է ՍԴ-ի նախագահ: Համաձայն ՀՀ Սահմանադրութեան 166-րդ յօդուածի 2-րդ կէտին՝ Սահմանադրական դատարանի նախագահը պիտի պաշտօնավարէ վեց տարի ժամկէտով՝ առանց նոյն պաշտօնին վերընտրուելու իրաւունքին:



Սահմանադրական Դատարանի Նախագահ Արման Տիլանեան

Արման Տիլանեանը նախագահի միակ թեկնածուն եղած է: Անոր թեկնածութեան կողմ քուէարկած են ինը դատաւորներէն վեցը, երկուքը՝ դէմ, մէկ քուէաթերթիկ անվաւեր նկատուած է:

Արման Տիլանեան Սահմանադրական Դատարանի դատաւոր ընտրուած էր 2018 թուականին:

Բարձր դատարանի նախագահի պաշտօնը թափուր էր Յունի-

սի 26-էն ի վեր՝ սահմանադրական փոփոխութիւններու ուժի մէջ մտնելէն ետք, երբ նախագահի պաշտօնէն ազատուեցաւ Հրայր Թովմասեանը եւ դատարանը լքեցին երեք դատաւորներ:

**Հայկական Կողմը Վստահ Է, Որ Շուշիի Ղազանչեցոց Եկեղեցին Հակառակորդը Դիտմամբ Հարուածած Է**



Շուշիի Ղազանչեցոց Սուրբ Ամենափրկիչ եկեղեցին ունեւորուածն էր

Շուշիի Ղազանչեցոց Սուրբ Ամենափրկիչ եկեղեցւոյ օղակին հարուածները ատրպէյջանական զինուած ուժերու կողմէն միտումնաւոր եղած են, հինգաթիւ երեկոյեան ասուլիսի ժամանակ յայտարարեց Հայաստանի պաշտպանութեան նախարարութեան ներկայացուցիչ՝ Արծրուն Յովհաննիսեանը:

«Երկու անգամ, ինչը միանշանակ ապացուցում է գործողութիւնների դիտաւորութիւնը, Ատրպէյջանի զինուած ուժերը հրթիռային հարուածներ են հասցրել Շուշի քաղաքի Ղազանչեցոց վանքին», - ընդգծեց Յովհաննիսեան:

Ատրպէյջանի կողմէ հասցուած երկրորդ հարուածի հետեւանքով վիրաւորուած են Ռուսաստանի Դաշնութեան երկու լրագրողներ՝ Եուրի Քոթեռնոքը եւ Լեւոն Արզանովը, ինչպէս նաեւ անոնց ուղեկցող խումբի անդամ՝ Հրանդ Պալատեանը: Անոնցմէ մէկուն առողջական վիճակը ծայրայեղ ծանր է, իսկ երկուքինը՝ ծանր: Լրագրողները Շուշիին մէջ կը լուսաբանէին եկեղեցիին հասցուած առաջին հարուածի հետեւանքները:

«Ատրպէյջանի կողմից խա-

ղաղ բնակավայրերում իրենց մասնագիտական գործունէութիւնը ծաւալող լրագրողների թիրախաւորումը կրում է միտումնաւոր բնոյթ եւ նպատակ ունի խոչընդոտելու ատրպէյջանական բանակի պատերազմական յանցագործութիւնների փաստագրումն ու ներկայացումը միջազգային հանրութեան», - յայտարարած է Հայաստանի Արտաքին գործոց նախարարութեան խօսնակ՝ Աննա Նաղտալեան:

Իրենց հերթին, յայտարարութեամբ հանդէս եկան Հայաստանի եւ Արցախի մարդու իրաւունքներու պաշտպանները: Արցախի օմբուդսմեն մարդու իրաւունքներու պաշտպան՝ Արտակ Բեգլարեանը երեկոյեան այցելած է հիւանդանոց, ուր վիրահատուած էր լրագրող՝ Եուրի Քոթեռնոքը:


Բեգլարեան դատապարտելով Ատրպէյջանին, լրագրողները եւ եկեղեցին թիրախաւորելը որակած է, որպէս պատերազմական ու մարդկութեան դէմ յանցագործութիւններ: Բեգլարեանի տուեալներով՝ ատրպէյջանական զինուած ուժերը հրթիռակոծած են նաեւ Շուշիի մզկիթի շրջակայքը:



ԼՈՒՐԵՐ

Ճօ Պայտրն Կոչ կ'ընէ ԱՄՆ-ին Ուժեղացնել Ձանքերը ԼՂ Խնդիրին Խաղաղ Լուծում Գտնելու Համար

Միացեալ Նահանգներու Դեմոկրար թեկնածու՝ Ճօ Պայտրն հանդէս եկաւ պաշտօնական յայտարարութեամբ Լեռնային Ղարաբաղի շուրջը ստեղծուած իրավիճակի վերաբերեալ:



Դեմոկրար թեկնածու՝ Ճօ Պայտրն

«Ես խորապէս մտահոգուած եմ Լեռնային Ղարաբաղի մէջ ռազմական գործողութիւններու բռնկմամբ եւ կոչ կ'ընեմ արագ լիցքաթափել, վերականգնել հրադադարը եւ վերսկսել բանակցութիւնները՝ Հայաստանի ու Ատրպէյճանի միջեւ: Միացեալ Նահանգները պէտք է ճնշում գործադրէ, որ հրադադարի գծի երկայնքով աւելի շատ դիտորդներ տեղակայուին, եւ կոչ ըմէ Ռուսաստանին դադարեցնել ցինիկօրէն գէնք տրամադրել երկու կողմերուն, միաժամանակ վերանայելով մեր անվտանգութեան աջակցութեան ծրագրերը՝ համոզուելու համար, որ ռազմական կարողութիւնները փոփոխութեան չեն ենթարկուիլ յարձակողական միջոցներու համար», - ըսուած է Պայտրն-Հարրիս ընտրաշաւի յայտարարութեան մէջ:

Պայտրն կը պահանջէ, որ Թրամփի վարչակազմը նաեւ պէտք է ուժեղացնէ իր դիւանագիտական ջանքերը ԵԱՀԿ Մինսկի խումբի համանախագահներ՝ Ֆրանսայի եւ Ռուսաստանի հետ, խաղաղ լուծում գտնելու, եւ աջակցի վստահութեան կառուցման միջոցներ ստեղծելուն»:

«Ռազմական գործողութիւններու բռնկումը Լեռնային Ղարաբաղի մէջ վտանգ կը ստեղծէ աւելի մեծ տարածաշրջանային հակամարտութեան վերածուելու համար, այդ իսկ պատճառով տարա-

ծաշրջանի երրորդ կողմերը պէտք է հեռու մնան այս հակամարտութիւնէն, իսկ Մինսկի խումբի միջնորդները անյապաղ պէտք է ձգտին թուլացնելու լարուածութիւնը եւ վերադառնալու բանակցութիւններուն», - ասուած է Միացեալ Նահանգներու նախագահի թեկնածուի յայտարարութեան մէջ, որ հրապարակուեցաւ գինադադարի մասին համաձայնութենէն առաջ:

Աւելի ուշ Ճօ Պայտրն Թուրքիոյ վրայ կատարուած գրառումով յտակեցուց իր կոչը, աւելցնելով, որ Թրամփ պէտք է պահանջէ Թուրքիայէն հեռու մնալ հակամարտութենէն:

The Hill ազդեցիկ թերթը այս կապակցութեամբ կը գրէ, որ Պայտրնի այս յայտարարութիւնը ցոյց կու տայ, թէ ինչպէս կրնայ Դեմոկրատ թեկնածուն նախագահ դառնալու պարագային առձակատիլ Թուրքիոյ հետ այս հարցով:

Եւրոպայի խորհուրդը Կոչ Կ'ընէ Լեռնային Ղարաբաղի մէջ Անյապաղ Հրադադար Հաստատելու

Եւրոպայի խորհուրդը հանդէս եկած է Լեռնային Ղարաբաղի մէջ անյապաղ հրադադարի հաստատման օգտին: Այսօր Եւրոպայի խորհուրդի խորհրդարանական վեհաժողովի Մշտական կոմիտէի ընդլայնուած նիստի ժամանակ յայտարարած է Յունաստանի առաջին փոխ արտաքին գործոց նախարար Միլիթիատիս Վարվիցիոթիսը:

«Հակամարտութիւնը միան-

գամայն նոր մակարդակ տեղափոխուած է: Մենք չենք կրնար այլեւս հանդուրժել ռազմական գործողութիւնները: Մեր առաջնահերթ խնդիրը պէտք է ըլլայ հրադադարի հաստատումը: Երկրորդ խնդիրը կողմերու վերադարձն է ԵԱՀԿ հովանիի ներքոյ ընթացող բանակցութիւններու սեղանի շուրջ», - յայտարարած է յոյն դիւանագէտը:

Ատրպէյճանի Նախագահը Պատրաստ է Վերադառնալու Բանակցութիւններու Սեղան

Ատրպէյճանի նախագահը յայտարարած է, թէ «պատրաստ է վերադառնալ դարաբաղեան խնդրի շուրջ խաղաղ բանակցութիւններու», միեւնոյն ժամանակ պնդած՝ թէ ինքը «Հայաստանին զիջումներ չի կատարեր, եւ որեւէ այլ երկիր չի կրնար ազդել Պաքուի այդ որոշման վրայ»:



Ատրպէյճանի նախագահ Ալիեւ

Ալիեւի ուղերձը տեղական հեռուստաընկերութիւններով հեռարձակուած է այն ժամանակ, երբ Մոսկուայի մէջ մեկնարկուած է Հայաստանի, Ատրպէյճանի եւ Ռուսաստանի արտաքին գործոց նախարարներու հանդիպումը:

Մինչ այդ Պաքուն կը յայտարարէ, թէ բանակցութիւններու չի նստիր, քանի դեռ հայկական ուժերը դուրս չեն ելած «գրաւեալ

տարածքներէն»: Ալիեւը պնդած է, որ խնդրի խաղաղ կարգաւորման «վերջին հնարաւորութիւն» կու տայ հայկական կողմին, կը հաղորդէ «Ռոյթըրզ»:

Մոսկուայի Համաձայնագիրը Պէտք է Կեանքի Կոչուի. Սերկէյ Լաւրով



Սերկէյ Լաւրով եւ Չոիրապ Մնացականեան Երկուշաբթի օր, Մոսկուայի մէջ կայացած համատեղ ասուլիսի ընթացքին

ՌԴ արտաքին գործոց նախարար՝ Սերկէյ Լաւրով ՀՀ Արտաքին Գործոց նախարար՝ Զոհրապ Մնացականեանի հետ համատեղ ասուլիսին անդրադարձաւ հարցին, թէ ինչ դեր պիտի խաղայ Ռուսաստանը ԼՂ հիմնախնդրի լուծման հարցով:

«Մենք այս հարցով աշխուժօրէն կը զբաղինք եւ որպէս համախաղաղ երկիրներէն մէկը, եւ որպէս Ռուսաստան՝ ուղղակի մեր հարեւաններու շատ մօտ դաշնակից, ռազմավարական գործընկեր: Եւ ես կը կարծեմ, որ այստեղ ձեռք բերուած մեր գիշերային պայմանաւորուածութիւնները ի գուր չէին», - ըսաւ Լաւրով:

Անդրադառնալով Ատրպէյճանի այն յայտարարութիւններուն, որ Թուրքիան պէտք է ներգրաւուի միջնորդական առաքելութիւններու մէջ՝ ինչպէս առանձին, այնպէս ալ ԵԱՀԿ Մինսքի խումբի համանախագահութեան ծիրէն ներս, Լաւրով ըսաւ. «Համատեղ յայտարարութեան մէջ կը վերահաստատուի բանակցային գործընթացի անփոփոխ ըլլալու մասին: ԵԱՀԿ Մինսքի խումբը բազմաթիւ երկիրներէն բաղկացած խումբ է, բայց միջնորդութեան լիազօրութիւն տրուած է երեք համանախագահներուն՝ Ռուսաստանին, ԱՄՆ-ին ու Ֆրանսային: Եւ համաշխարհային մայրաքաղաքներէն վերջին օրերուն կատարուած բոլոր յայտարարութիւնները կը հաստատեն յանձնառութիւնը ԵԱՀԿ Մինսքի խումբի համանախագահութեան մասնաթիւն, ինչով մենք հիմա զբաղուած ենք մեր ԱՄՆ-ի ու Ֆրանսայի գործընկերներուն հետ»:

Ըստ Լաւրովի՝ Ատրպէյճանի նախագահը ողջունած է Մոսկուայի մէջ ձեռք բերուած պայմանաւորուածութիւնները: Լաւրով նշեց, որ կապուած է Թուրքիոյ ԱԳ նախարար՝ Չաուուշօղլուի հետ, տեղեկացուցած, որ կ'ակնկալեն անոնց աջակցութիւնը համանախագահներու ջանքերու ուղղութեամբ: Չաուուշօղլուն մէկ այլ զանգով հաստատած է իրենց աջակցութիւնը Մոսկուայի համաձայնագիրներուն: «Եւ հիմա պէտք է, որ անոնք կեանքի կոչուին, ինչով մենք հիմա կը զբաղինք», - ըսաւ ան:

Հայաստանը եղած է ու կը շարունակէ հաւատարիմ մնալ Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի բացառապէս խաղաղ կարգաւորման, բանակցութիւններու ճանապարհով: Եւ այդ ուղղութեամբ Հայաստանը ջանքեր կը ներդնէ: Այս մասին ՌԴ արտաքին գործոց նախարար՝ Սերկէյ Լաւրովի հետ համատեղ ասուլիսին ըսաւ ՀՀ ԱԳ նախարար՝ Զոհրապ Մնացականեան:

«Ուզում եմ առանձնապատուկ ընդգծել վերահսկողութեան մեքենականութեան ներդրման անհրաժեշտութիւնը, որը հնարաւորութիւն կու տայ հասնել կրակի դադարեցմանը: Միայն կրակի դադարեցման ռեժիմի լիարժէք հաստատման դէպքում մենք կարող ենք բոլոր հարցերում արդիւնաւէտ առաջ շարժուել», - ըսաւ Մնացականեան:

Հայաստանն ու Արցախը, Մնացականեանի խօսքով, միշտ կողմ արտայայտուած են վերահսկողութեան մեքենականութեան ներդրման, Ատրպէյճանի գանոնք մերժած է:

«Ես եւս կը պնդեմ, որ կրակի դադարեցման նկատմամբ հսկողութիւնը չափազանց կարեւոր ու առանցքային է», - ըսաւ ՌԴ ԱԳ նախարար՝ Սերկէյ Լաւրով:

«Նախագահ Փութինի, Պաքուի ու Երեւանի գործընկերներու հետ հեռախօսային խօսակցութիւններու ժամանակ շօշափուած է նաեւ վերահսկողութեան մեքենականութեան հարցը, թէ ինչպէս հնարաւոր է վերահսկել կրակի սպասուող դադարեցումը: Ինչպէս դուք գիտէք, մեր համատեղ յայտարարութեան մէջ նշուած է, որ վերահսկողութեան մեքենականութեան ու կրակի դադարեցման յստակ յարաչափերը կը համաձայնեցուին յաւելեալ: Հաշուի առնելով Լեռնային Ղարաբաղի ու անոր շուրջ ստեղծուած սուր իրավիճակը, հաշուի առնելով գերիներու, դիերու փոխանակման հարցը, կարելի չէ ձգձգել այդ մեքենականութեան մշակման հարցը: Այդ ուղղութեամբ աշխատանքներ կային կը տարուի, Ռուսաստանի Դաշնութիւնը անոր կը մասնակցի եւ համանախագահները ներգործութիւն կ'ունենան», - ըսաւ Լաւրով:

ՄԱՍԻՍ  
ԱՄԵՆԱՎԱՍՏԱՐԵԼԻ ԱՂԲԻՐԸ ՀԱՅՐԵՆԻ ԼՈՒՐԵՐՈՒ



### ՍԴՀԿ-ի Կողմէ Արցախի Հերոս Ժողովուրդին



Արցախեան ռազմաճակատներուն վրայ այս օրերուն ծաւալուող ռազմական գործողութիւններուն առթիւ զորաշարժի ենթարկուած է համայն Հայութիւնը՝ օգնութիւն հասցնելու համար Արցախի մարտնչող ժողովուրդին:

Վերջին օրերուն, Լոս Անճելոսահայ խումբ մը բարերարներ յատուկ օգնաւ մը վարձած էին, դեղորայք, բժշկական գործիքներ եւ այլ գործիքներ ուղարկելու համար Հայաստան:

Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութիւնը օգտագործելով այս առիթը, նոյն թուիչքով 10 հատ էլեքտրական հոսանք արտադրող

մեծ չափի շարժական սարքեր ուղարկեց Արցախ:

«Նուիրուած բարերարների շնորհիւ ԱՄՆ-ում գործող Հայաստանի Հիմնադրամը կազմակերպել է մարդասիրական օգնութեան համար նախատեսուած շարժեքային շտաբի Լոս Անճելոսից դէպի Երեւան, որի շնորհիւ յատուկ բեռնատար օդանավ հայրենիք են հասնելու մի քանի տոննա դեղորայք, վիրաբուժական եւ բժշկական սարքաւորումներ, մարդասիրական այլ օգնութիւններ, այս առթիւ յայտարարեց Հայաստանի Համահայկական Հիմնադրամի Երեւանի կեդրոնական գրասենեակը:

### Իսրայէլ Դուրս Եկաւ Ստուերէն. Ո՞վ Կը Կառավարէ Հայկական Բանակի Դէմ Յարձակումները

Հանրային հեռուստատեսութեամբ խօսելով իսրայէլի կողմէ Ատրպէյճանին դերժամանակակիր սպառնազինութեան մատակարարման մասին, Հայաստանի Ազգային Ժողովի Պաշտպանութեան եւ անվտանգութեան հարցերու լանձնատնօրդի նախագահ Անդրանիկ Քոչարեան յայտնեց, որ իսրայէլ այս օրերուն ալ սպառնազինութիւն կը մատակարարէ Ատրպէյճանին: Ան ըսաւ, որ անոր պէտք է գնահատական տրուի:

Իր հերթին, ՀՀ Պաշտպանութեան նախարարութեան ներկայացուցիչ Արծրուն Յովհաննիսեան Գորիսի մէջ ասուլիսի ժամանակ կրկին անդրադարձաւ այդ խնդիրին, ակնարկելով նաեւ, որ հայկական ուժերու դէմ կիրառուող իսրայէլեան անօդաչուները եւ հրթիռային համակարգերը կը կառավարուին ոչ-ատրպէյճանցի մասնագէտներու կողմէ:

Իսրայէլի նախագահը, տարբեր պաշտօնեաներ, նաեւ յայտնի պլոկըր, իսրայէլի քաղաքացի Ալեքսանտր Լափշին, Հայաստանի մէջ իսրայէլեան կողմի փաստաբանութեամբ զբաղուած շրջանակները պատրաստի կարծրատիպեր ունին այդ պարագայի համար՝ այս գործառնութենէ, ուղղուած չէ երրորդ կողմի դէմ, Հայաստանը ժամանակին՝ 2015 թուականէն պէտք է աշխատէր այդ ուղղութեամբ եւ այլն:

Վերջին իրադարձութիւնները ռազմաճակատին եւ քաղաքական ճակատին վրայ ցոյց կու տան այս պնդումներուն անհեթեթութիւնը: Իսկ ԱՄՆ ֆինանսական հետախուզութեան փաստաթուղթերու արտահոսքը կը հանէ բոլոր հարցերը իսրայէլ-Պաքո գործարքի գուտ գործառնութիւն ըլլալու առնչութեամբ:

Իսրայէլ կը շարունակէ համալրել հայ զինուորներու անպատմելի հերոսութիւններուն շնորհիւ Ատրպէյճանի սպառող պաշարները, ընդ որում՝ այնպիսի զինատեսակներով, որոնք առաւելութիւն կ'ապահովեն շարք մը առումներով, զգալի կորուստներ պատճառելով հայ խաղաղ բնակչութեան եւ զինուած ուժերուն: Միայն Հոկտեմբեր 1-էն Թուրքիոյ եւ Վրաստանի օդային տարածքով դէպի Պաքո կատարուած է բեռնատար օդանավերու 30 թռիչք իւրաքանչիւրը 55-60 թոն բեռով:

Ընդ որում, յուլիսեան մարտերէն յետոյ, երբ հայկական կողմը խոցեց իսրայէլեան անխոցելի համարուող անօդաչուն, իսրայէլի պատկանող ռազմարդիւնաբերական ընկերութիւնները՝ IMI Systems Ltd-ը, որ կը մատակարարէ այդ զինատեսակները, պահանջեց, որ Յահալի սպաները իրենք կառավարեն տրոնները (առանց օդաչուի թռչող սարք) արբանեակային կապի միջոցով: Ինչ որ կարծես կը կատարուի, դատելով նաեւ հայ պաշտօնեաներու յայտարարութիւններէն:

Կը յիշուի տարիներ առաջ բռնկած գայթակղութիւնը, երբ Պաքոն իսրայէլեան ընկերութիւններէն պահանջած էր անօդաչուները փորձարկել հայկական դիրքերու դէմ, մեծ գոռմարներու դիմաց:

Այս արդէն իսրայէլի ուղիղ մասնակցութիւն է պատերազմին եւ պատերազմական լանցագործութիւններուն, այսպէս ըսած քաղաքական մասնակցութեան գուզահեռ:

Բանն այն է, որ Թուրքիոյ քաղաքական նպատակները Անդրկովկասի մէջ զգալի մասով կը համընկնին իսրայէլի շահերուն:

### Ուրուկուէյ կը Դատապարտէ Յարձակումները Հայ Ժողովուրդի Դէմ



Ուրուկուէյի կառավարութիւնը յայտարարութեամբ հանդէս եկած է Լեռնային Ղարաբաղի տարածաշրջանին մէջ բռնութեան աճի կապակցութեամբ, որմով կը դատապարտէ յարձակումները հայ ժողովուրդի նկատմամբ:

Յայտարարութեան մէջ մասնաւորապէս ըսուած է. - «Հայաստանի եւ Ատրպէյճանի ռազմական ուժերու միջեւ զինուած առճակատման վատթարացման հետեւանքով, Ուրուկուէյի կառավարութիւնը անգամ մը եւս իր մտահոգութիւնը կը յայտնէ տարածաշրջանի ապակայունացման վտանգի վերաբերեալ եւ իր համեմարաշխութիւնը կը յայտնէ այդ գործողութիւններու ընթացքին սուղաճանցներու եւ զոհերու ընտանիքներուն: Ուրուկուէյը կը դատապարտէ յարձակումները հայ ժողովուրդին դէմ, որու հետ միշտ պահպանած է ամուր բարեկամական կապեր»:

Ուրուկուէյը կը վերահաստատէ իր աջակցութիւնը միջազգային հանրութեան կոչերուն, երկու կողմերու միջեւ արդիւնաւէտ եւ անյապաղ հրադադարի հաստատման, երկխօսութեան եւ բանակցութիւններու միտնորտի վերականգնման վերաբերեալ, որ, ըստ յայտարարութեան, անփոխարինելի պայ-

ման է հակամարտութեան խաղաղ կարգաւորման համար, միջազգային իրաւունքի, ՄԱԿ-ի Անվտանգութեան խորհուրդի բանաձեւերու եւ ԵԱՀԿ Մինսքի խումբի կողմէ խորհուսուող նախաձեռնութիւններու ծիրէն ներս: Այս շրջածիրէն ներս, Ուրուկուէյը կը սատարէ ՄԱԿ-ի գլխաւոր քարտուղարի եւ Անվտանգութեան խորհուրդի անդամներու, ռազմական գործողութիւնները դադարեցնելու եւ երկխօսութիւնը վերսկսելու կոչերը:

«Հայ եւ ուրուկուէյցի ժողովուրդների մէկդարեայ սերտ բարեկամութիւնը սկիզբ է առել այն պահից, երբ Ուրուկուէյը գրկաբաց ընդունեց Հայոց ցեղասպանութիւնից մագապուած եղած հայ գաղթեալներին: Ուրուկուէյը առաջինն էր աշխարհում, որ ճանաչեց Հայոց ցեղասպանութիւնը եւ կերտեց պատմութիւն: Ուրուկուէյը հաւատարիմ է իր սկզբունքներին եւ համոզմունքներին: Այսօր կարեւոր է գիտակցել, որ միահամուռ ջանքերով հնարաւոր է կանխել նոր ցեղասպանութիւն: Կանխել եւ ոչ թէ յետագայում ճանաչել եւ դատապարտել», - «Ազատութիւն»ի հետ գրոյցին յայտարարեց Ուրուկուէյի մօտ Հայաստանի դեսպան՝ Էսթերա Մկրտումեան:

### Հակառակ Զինադադարի Շուրջ Գոյացած Համաձայնութեան

Շարունակուած էջ 1-էն

ներ: Ատրպէյճանի զինուած ուժերու ռազմաօդային ուժերը թրքական օդուժի պատասպարման, աջակցութեան տակ, կիրառելով բազմաթիւ մարտական հարուածային ԱԹՄ-ներ, կատարել են նաեւ 36 մարտական թռիչք: Հիւսիսային ուղղութեամբ մեր հակաօդային ուժերը յաջողած են խոցել մէկ ՍՈւ-25 գրոհիչ:

«Հազարութ քաղաքի ուղղութեամբ դիվերսիոն հետախուզական գործողութիւնները կասեցուել են, հետ է շարտուել հակառակորդը: Հազարութ քաղաքը գտնուած է մեր Զինուած ուժերի վերահսկողութեան տակ», - աւելցուց Յովհաննիսեան:

Ինչ կը վերաբերի սահմանային թափը գիւղի մասին, Յովհաննիսեան շեշտեց որ գիւղը ատրպէյճանական վերահսկողութեան տակ չէ: «Գիւղի մատուցներում են ատրպէյճանական զօրքերը: Քանի որ հիւսիսային հատուածում մենք կատարել ենք զօրքերի վերախմբաւորումներ թափը-Մատաղիս ուղղութեամբ, հետեւաբար կարող են

նման տեսանիւթեր հրապարակուել: Ես մի քանի անգամ շեշտել եմ, որ կոնկրետ դիրքերի, գիւղերի ու մատուցների վերաբերեալ կատարուած հրապարակումներից չկատարենք այնպիսի եզրակացութիւններ ու քննարկումներ, թէ արդեօք այդ դիրքը, բնակավայրը մենք վերահսկում ենք, թէ չենք վերահսկում», - ըսաւ Յովհաննիսեան:

Ալիւր կը պնդէ, Թուրքիոյ մասնակցութիւնը Ատրպէյճանի նախագահ Իլհամ Ալիւեւ կրկին անգամ պնդած է, որ Թուրքիան պէտք է համալրէ ԵԱՀԿ Մինսքի խումբի համանախագահներու շարքը:

Թուրքիան Մինսքի խումբի անդամ է: Այդ պարագային ինչո՞ւ Թուրքիան պէտք է ըլլայ նաեւ Մինսքի խումբի համանախագահներու կարգին», - թրքական Haber Global հեռուստաալիքի եթերով յայտարարած է Ատրպէյճանի նախագահը՝ աւելցնելով. - Եթէ նոյնիսկ արեւմտեան շատ երկիրներ չեն ցանկար ընդունիլ այդ փաստը, միեւնոյն է՝ Թուրքիան լուրջ ըսելիք ունի եւ այն լիովին անկախ է»:



# «Եթէ Ատրպէյճանին Արտօններ Ցեղական Զտուճներ Իրականացնել, Կը Կատարուի Այն, Ինչ Եղաւ 1915-Ին».

Հայաստանի Հանրապետութեան նախագահ Արմէն Սարգսեան հարցազրոյց տուած է «BBC»-ի արաբական խմբագրութեան:

Հ. Պարոն նախագահ, մենք կը խօսինք Հայաստանի եւ Ատրպէյճանի միջեւ լարուածութեան մասին: Այս ամէնը կրնա՞ք մեկնաբանել իբրեւ լայնածաւալ պատերազմ:

Պ.- Ատրպէյճանը 27 Սեպտեմբերի վաղ առաւօտեան Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան սահմաններուն ամբողջ երկայնքով սկսաւ հրետակոծել եւ ուժակոծել ոչ միայն սահմանը, այլեւ աւելի խորը՝ ներառեալ դպրոցներ եւ աշխարհ: Մեծ թիւով քաղաքացիական անձեր վիրաւորուեցան՝ տատկաներէն մինչեւ փոքր երեխաներ, ոչնչացուեցան տարբեր շինութիւններ, ամէն օր հսկայական վնասներ կը հասցուին: Եւ այս քանչէն ետք եւ Ձեզի կը ձգեմ որոշել՝ ասիկա լայնածաւալ պատերազմ է՞, թէ՞ ոչ: Հայկական կողմը չէ սկսած այս ամէնը, ի դէպ, հայկական կողմը այս պարագային Հայաստանի Հանրապետութիւնը չէ, այլ՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետութիւնը, Արցախը:

Ասիկա փոքր երկիր մըն է 150 հազար բնակչութեամբ, որ այստեղ է հազարաւոր տարիներ: Իոսիֆ Սթալինի կողմէ անոր պարտադրուած է ըլլալ Խորհրդային Ատրպէյճանի մաս: Խորհրդային Միութեան փլուզման ժամանակ ժողովուրդը որոշեց, որ իրենք են սեփական ճակատագիրը տնօրինողները, քանի որ Լեռնային Ղարաբաղի մէջ բնակչութեան աւելի քան 90 տոկոսը հայեր էին: Անոնք հանրաքուէի միջոցով վճռեցին ապրիլ անկախ պետութեան մէջ:

Միւս կողմէն Ատրպէյճանն է, որ ունի նիւթական միջոցներ եւ ուժ, 10 միլիոն բնակչութիւն եւ թուրքիոյ նման բարեկամ: Անոնք կը փորձեն ստիպել հայերուն լքել այն տարածքը, ուր հայերը պատմականօրէն ապրած են դեռ այն ժամանակներէն ի վեր, երբ Ատրպէյճանը իբրեւ պետութիւն գոյութիւն չունէր: Իմ բառապաշարին մէջ ասիկա կը կոչուի ցեղական գտում՝ ստիպել մարդոց հեռանալ միայն այն պատճառով, որ անոնք այլ ցեղական պատկանելիութիւն ունին, չեն համապատասխաներ այս կամ այն որակաւորման: Արդե֞ք ասիկա լայնածաւալ պատերազմ է, թէ՞ ոչ: Կը կարծեմ՝ այո: Ասիկա արիւնահեղ պատերազմ է, փոքրաթիւ, բայց հպարտ ժողովուրդի պատերազմ: Ժողովուրդ, որ ապացուցած է, որ կրնայ կռուիլ եւ երբեք չի կրնար պարտուիլ: Անոնք այն ժամանակ յաղթեցին Ատրպէյճանի դէմ պատերազմին: Չեմ գիտեր, թէ ինչու Ատրպէյճանը բանակցելու եւ միջազգային բանակցութիւններու սեղանին փոխարէն որոշած է խնդիրը լուծել Լեռնային Ղարաբաղի հայ ժողովուրդի ցեղական գտման միջոցով:

Հ. Դուք ինչպէ՞ս կը վերաբերիք ԵԱՀԿ Մինսքի խումբի դերակատարման:

Պ.- ԵԱՀԿ Մինսքի խումբը վերջին 26 տարիներուն՝ 1994 թուականի հրադադարէն ետք, հսկայական եւ շատ կարեւոր դերակատարութիւն ունեցած է: Նախ եւ առաջ, անիկա մեծ յարգանք վայելող միջազգային կազմակերպութիւն է երբեք համախառնակներով՝ Ռուսիա, Ֆրանսա եւ Միաց-



եալ Նահանգներ: Անոնք տքնաջան կ'աշխատին երկու կողմերուն հետ՝ խնդիրը վերջնական դիւանագիտական կամ քաղաքական լուծման յանգեցնելու համար:

Ուստի ես շատ բարձր կը գնահատեմ անոնց աշխատանքը: Ի հարկէ, որեւէ բանակցութիւն այս աշխարհի վրայ՝ քաղաքական, ռազմական, թէ՛ գործարարական բանակցութիւն, չեն կրնար մշտապէս ծրագրել, որ յաջող անցնի, եւ կրնաս հասնիլ նպատակիդ: Բանակցութիւններուն մէջ կ'ըլլան վերելքներ ու վայրէջքներ: Սակայն այս բանակցութիւններուն մէջ պէտք է ըլլալ համբերատար: Երբեմն քեզ կը բաւարարէ բանակ-

ցութիւններուն մէկ կողմը, երբեմն ալ՝ ոչ, երբեմն կը մտածես, թէ կը կորսնցնես եւ՝ հակառակը: Պէտք է բանակցութիւնները վերջնական աւարտին հասցնել վերջնական փաստաթուղթի միջոցով, ստորագրել զայն ու անկէ ետք ալ մեծ ջանքեր գործադրել, որ ստորագրածը կեանքի կոչուի:

Բացարձակ ոչ-մարդկային եւ ոչ-բնականոն ձեւ է լքել բանակցութիւններու սեղանը եւ փորձել լուծել խնդիրը ռազմական ուժի միջոցով:

Հ. Դուք շատ լաւ խօսեցաք եւ բարձր գնահատեցիք ԵԱՀԿ-ը, սակայն դուք կը շարունակէք մերժել Ռուսիոյ նախաձեռնութիւնը՝ վերջաց-

նելու այս լարուածութիւնը:

Պ.- Չեմ գիտեր, թէ ով տուած է ձեզի այդ միտքը, այդ միտքը ճիշդ չէ: Ռուսիան դիմած է երկու կողմերուն միջադէպերը դադրեցնելու եւ հրադադարի համար, որ բնական է: Սակայն չկայ որեւէ մեքենականութիւն: Որեւէ ռազմական գործողութիւն կամ պատերազմ դադրեցնելու համար պէտք է ունենաս յստակ մեքենականութիւն: Ասիկա բարդ գործընթաց է: Ասիկա՛ մէկ: Անիկա դեռ գործողութեան մէջ չէ:

Ոչ միայն Ռուսիան, այլեւ Միացեալ Նահանգները, Եւրոպական Միութիւնը, Ֆրանսան, շատ երկիրներ դիմած են թէ՛ Հայաստանին, թէ՛ Ատրպէյճանին, Հայաստան ըսելով նկատի ունիմ նաեւ Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան ժողովուրդին՝ դադրեցնելու պատերազմը: Սակայն դադրեցնելու համար պէտք է ճնշում գործադրել յարձակողի վրայ, այս պարագային՝ այս ռազմական գործողութիւնները եւ պատերազմը սկսած է Ատրպէյճանը, ո'չ թէ Լեռնային Ղարաբաղի ժողովուրդը: Որեւէ ցանկութիւն չունի մէկ անգամ եւս պատերազմ սկսելու: Ճիշդ չէ դիմել երկու կողմերուն, քանի որ Ատրպէյճանը սկսած է պատերազմը եւ ճնշումը պէտք է գործադրել անոր վրայ՝ պատերազմը դադրեցնելու համար: Այն պահուն, երբ անոնք դադրեցնեն,

Շար.ը էջ 19





**«Ամէն Օր Նոր Շարասիւն մը կը Մեկնի».**  
Սուրիացի Ձինեալները The National-ին Պատմած են Թուրքիոյ Կողմէ Հաւաքագրուելու եւ Ատրպէյճան Մեկնելու Մասին



Արաբական Միացեալ Էմիրու-թիւններու մէջ լոյս տեսնող The National պարբերականը անդրադարձած է Լեռնային Ղարաբաղի մէջ Ատրպէյճանի զինուած ուժերու կազմին մէջ կռուող սուրիացի զինեալներուն եւ հատուածներ ներկայացուցած է անոնց հետ զրոյցէն:

Յօդուածը վերնագրուած է այսպէս՝ «Լեռնային Ղարաբաղի մէջ գտնուող թուրքիոյ սուրիացի զինեալները կը հարցնեն, ինչո՞ւ մենք այստեղ ենք»:

Պարբերականը կը յայտնէ, որ զինեալները կռիւի եկած են՝ յանուն գումարի, սակայն հարուածներու տարափը անոնց կը ստիպէ մտածել միայն Սուրիա գտնուող իրենց ընտանիքներուն մասին:

The National-ը կը գրէ, որ Լեռնային Ղարաբաղի մէջ ռազմական գործողութիւններու ծաւալումէն անմիջապէս ետք թուրքիան

«Մեզմէ շատերը հրաժարեցան, քանի որ տեսած էին, թէ ինչ տեղի ունեցած է Լիպիոյ մէջ թուրքիոյ միջամտութենէն ետք: Բայց ես մտածեցի, որ կրնամ գումար վատակիլ եւ մինչեւ ձմեռ ընտանիքս հանել ծանր դրութենէն», - ըսած է Իպրահիմը:

Իպրահիմին առաջարկած են պայմանագիր կնքել 3 ամիսով, ամսական 1300 տուլար աշխատավարձով: Այն տեղի ունեցած է 24 Սեպտեմբերին՝ ռազմական գործողութիւնները սկսելէն 3 օր առաջ: Ըստ սուրիացի վարձկանի հաշուարկներուն՝ Ղարաբաղի մէջ մօտ 3000 սուրիացի զինեալ կը կռուի:

«Միայն Ուրբաթ օր 6 զոհ ունեցանք եւ 30 վիրաւոր, որոնց ստիպուած էին Պաքու տեղափոխել», - ըսած է Իպրահիմը:

Ըստ Մարդու իրաւունքներու սուրիական դիտարանի՝ վերջին 2

Ալլահը վկա. ես ազերիները օրեր է լինում մեզ ուտելիքից էլ են կտրում, մեր տղաներից շատերը վիրավորվեցին, իսկ այս շուն պոռնիկի տղերքը նրանց չեն ճամփում [տուն ուղարկում], թողնում են մահաւան որ չվճարեն իրենց:

Аллах свидетель. Эти азербайджанцы лишают нас еды. Многие из наших ребят были ранены, а эти сукины сыновья не отправляют их домой и оставляют их умирать, чтобы им не платить деньги.

հազարաւոր սուրիացիներ ուղարկած է՝ Ատրպէյճանի կողմէ կռուելու:

«Ես ձեզի հետ կը խօսիմ ստորգետնեայ փոսէ, ուր ստիպուած էինք փախիլ», - պարբերականին հաղորդած է 24-ամեայ Իբրահիմը, որ, ըստ յօդուածագրի, «սարսափած ձայնով կը խօսէր»:

«Մեզի ծանր հարուած հասցուցած են: Մենք այնքան մարդ կորսնցուցած ենք, որ նոյնիսկ հաշուել չեմ կրնար: Չեմ գիտեր՝ ինչ կ'ընենք այստեղ: Նոյնիսկ գումարը չարդարացներ այս սարսափ ֆիլմին մէջ գտնուելը: Թուրքերը մեզի աչքախի իրավիճակի մէջ դրած են, որ չենք կրնար այստեղէն փախիլ», - ըսած է սուրիացի վարձկանը:

Երեք երեխաներու հայր Իպրահիմը The National-ին պատմած է, որ Ատրպէյճանական զօրքերը, որոնց կողքին իրենք պէտք է կռուին, իրենցմէ քանի մը քիլոմետր ետեւ են, եւ իրենց խումբին կ'աջակցին միայն թրքական ԱԹՄ-ները:

«Սուլթան Մուրատի ջոկատ» խմբաւորման անդամ Իպրահիմը կը գտնուի անմիջապէս առաջնագիծին՝ Իրանի սահմանին մօտ: Ան պատմած է, որ երեք շաբաթ առաջ զինեալներու սպաներէն մէկը կամաւորներ հաւաքագրած է «Ատրպէյճանի մէջ թրքական գործողութիւններուն համար»:

շաբաթուան ընթացքին Լեռնային Ղարաբաղի մէջ մահացած է առնուազն 117 սուրիացի վարձկան, աւելի քան 80-ը վիրաւորուած է:

Մէկ այլ սուրիացի՝ Համիտը, պատմած է, որ 18 Սեպտեմբերէն Լեռնային Ղարաբաղ ուղարկուած է իր մարդոցմէ 15-ը: Ըստ անոր՝ վարձկանները հիմնական «Սուլթան Մուրատի ջոկատ» եւ «Ալ Համզա խմբաւորում» կողմող սուրիական ընդդիմադիր զինուած խումբերէն են, սակայն շատերը դեռ կը միանան, եւ ամէն օր նոր շարասիւն մը կը մեկնի:

Ըստ Համիտի՝ կամաւորներու պակաս չկայ: Թուրքիոյ իշխանութիւնները գրանցած են արդէն մի քանի հազար հոգի:

Երեք երեխաներու հայր 28-ամեայ Մոհամմետը Պաքու ժամանած է 2 Հոկտեմբերին:

«Երբ մենք իջանք օդանաւէն, մեզի զինուորական շարասիւնով բերին առաջնագիծ, ուր մենք թրքական կայանագործի մէջ կը գտնուինք: Յուրտ է, լեզուն չենք հասկանար: Սպաները մեզի թոյլ կու տան համացանցէն օգտուել միայն մեր ընտանիքներուն մեր մասին տեղեկացնելու համար, - պարբերականին յայտնած է Մոհամմետը:

Հակառակ այս ամէնուն՝ Ատրպէյճանը կը հերքէ վարձկաններ օգտագործելու մասին տեղեկութիւնները:

**Միջազգային Մամուլի Էջերուն Կրայ Յայտնուած Լուսանկարի Ձինուորը Յետմահու Պարգևատրուած Է «Արիութեան Համար» Մետալով**



Artak Hovhannisyán  
19 hours ago

ՀԱՂՈՑԵԼՈՒՄԵՆ

Հարգելի՛ հայրենակիցներ, Իմ որդին՝ Ալբերտ Հովհաննիսյանը, ում լուսանկարն այս օրերին լայն տարածում գտավ ողջ աշխարհում և հարազատ դարձավ շատերից համար, անմահացավ: Անչափելի ու անհատակ է իմ ու իմ ընտանիքի ցավը:

Օրեր շարունակ նրանից որևէ տեղեկություն չունեինք, բայց շատերը մեր ընտանիքի հետ էիք՝ ձեր ներկայությամբ, խոսքով, աղոթներով, բայց ... այլ բան էր կախարհոված:

Կոկորդա խեղդող արցունքների միջից ուզում եմ խնդրել, որ բոլորիդ հիշողություններում Ալբերտը մնա հավերժ երիտասարդ, անսահման լավատես, չափազանց հայրենասեր, ով մեծ երազանքներ ու շատ անելիքներ ուներ և ում մեծագույն սերը Հայրենիքն էր:

Վիշտու ծանր է ու մեծ, բայց հպարտություն ավելի մեծ է, որ հայրենասեր հայի, մերօրյա իրական Հերոսի հայրն եմ: Գիտակցում եմ՝ իմ Ալբերտը միայն իմ Հերոսը չի, նա բոլորիս Հերոսն է, նաև ներկա ու ապագա սերունդների Հերոս հայի օրինակ, ով իր հերոս նախնիների ճանապարհն էր և անմահացավ...

Փա՛ռք մեր հերոսներին:

Միջազգային մամուլի էջերուն Կրայ յայտնուած լուսանկարի զինծառայող Ալբերտ Յովհաննիսյանը յետմահու պարգևատրուած է «Արիութեան Համար» մետալով: Այս մասին «Ֆէյսբուք»-ի իր էջին վրայ Ալբերտի հօրը՝ Արտակ Յովհաննիսեանին ուղղուած գրառման մէջ նշած է Արցախի նախագահ Արայիկ Յարութիւնեանը:

րագային՝ նաւահանգիստի պայթումն ու երկրին մէջ տիրող ճգնաժամը խոչընդոտեցին միութեան ծրագրերը: Եագուպեան սակայն յայտարարեց, թէ յաջողութեամբ լոյս տեսաւ «Հ.Բ.Ը.Միութեան Հաճընի Որբանոցը» գիրքը՝ մեկենասութեամբ հայրենակից Կարապետ Պապահէքեանի, իսկ շուտով կը հրատարակուի նաեւ «Նամակներ Հաճընէն» հատորը՝ մեկենասութեամբ Սիւլեան ընտանիքի, յանձինս հայրենակից Ռաֆֆի Սիւլեանի: Սուրբ Գէորգ եկեղեցւոյ շրջափակին մէջ ապա տեղի ունեցաւ Հաճնոյ հերոսամարտին ու նահատակներուն նուիրուած յուշակոթողի բացումը՝ ձեռամբ հայրենակից Թորոս Սաչեանի, բարերարութեամբ հայրենակից Ռաֆֆի Սաչեանի, ի յիշատակ իր հօր՝ Յակոբ Սաչեանի: Յուշակոթողի հեղինակներն են արուեստագետ-ճարտարապետ Ամալիա Երեմեան եւ քանդակագործ Վարդան Աւեսեան: Աւարտին, Լիբանանի թեմի առաջնորդ Շահէ արք. Փանոսեան օրհնեց յուշակոթողը, պաշտօնապէս յայտարարելով անոր բացումը:

#ArtsakhStrong  
#GlobalArmeniansUnite  
**WE ARE OUR BORDERS.  
ALL FOR ARTSAKH.**  
Donate Now  
**TO DONATE VISIT  
WWW.ARMENIAFUND.ORG/DONATE**



### Արցախի Ցաւը եւ Յոյսը



#### ԴՈԿՏ. ՀՐԱՅՐ ԸԵՊԵՏԵԱՆ

Մի քայլ էլ Հաճեանը ծանօթ լրագրող-գրող է հայկական եւ միջազգային տեղեկատուութեան իրականութիւններէն ներս: Ան կ'ապրի Ստեփանակերտ, Արցախ: Սեպտեմբեր 2019-ին միասին էինք Ստեփանակերտ երբ «Սփիւռքահայ կեանքեր՝ Ինչպէս որ Տեսայ» գիրքին ներկայացումը կատարեցինք Արցախի պետական համալսարանին մէջ: Ունեցանք շատ հաճելի ժամանակ եւ խօսակցութիւն: Ծանօթացայ նաեւ իր ընտանիքին: Մի քայլ էլ երէց որդին՝ Նորայրը, նահատակուած է Արցախի 2016-ի քառօրեայ պատերազմին: Նորայրին նկարը գետեղուած է Մի քայլ էլ տան հիւրասենեակին մէջ: Նորայրը աշխուժ եւ ուժակաւ տղայ եղած է եւ իր սրտին մէջ ամուր շաղկած հայրենիքի եւ հողի սէրը եւ նուիրումը: Այս սէրը եւ նուիրումը գինք տարած են մինչեւ նահատակութիւն՝ իր ետին ձգելով իր կողակիցը, գաւակները, եւ ծնողքը:

Մի քայլ էլ իր սրտին մէջ սեղմած է Նորայրի ցաւը: Բայց այդ ցաւին մէջ ակնյայտ էր անոր հպարտութիւնը: Ցաւը զաւակին մահուանը ու հպարտութիւնը Նորայրի հայրենասիրութեան եւ անձնագոհութեան: «Կտրիճ տղայ էր» ըսաւ Մի քայլ էլ, ցոյց տալով իր զաւակին նկարը: Մի քայլ էլ աչքերուն մէջ կը տեսնէի կուտակուած եւ նոյնքան զսպուած արցունք:

Մի քայլ էլ կը հաւատայ հայրենի հողին եւ ամուր կառչած է անոր: Իրեն համար սրբութեան համագոր է: Իր երկրորդ տղան՝ Երուանդը, որ նոյնպէս կազմած է ընտանիք եւ ունի զաւակ մը, կը գործէ Արցախի հանրապետութեան Արտաքին Գործոց նախարարութեան մէջ, որպէս սփիւռքի եւ անոր հետ յարաբերութիւններու բաժնի վարիչ-պատասխանատու: Երուանդը հայրենասէր երիտասարդ է եւ ունէր ծրագրեր: Կը հաւատայ թէ Արցախի հանրապետութիւնը պէտք է իր բաժինը բերէ սփիւռքի հետ յարաբերութիւններուն մէջ: Երուանդին հետ բաւական խօսեցանք եւ գրուցեցինք: Մշակեցինք նաեւ ծրագրեր, թէ ինչպէս կրնանք գործակցիլ միասին յառաջիկային Արցախ-Սփիւռք յարաբերութիւններու զարգացման նպատակով:

Բայց երեւի մեր մշակած ծրագիրները Երուանդին հետ պիտի մնային կիսաւարտ:

Երեքշաբթի, Հոկտեմբեր 6-ին հասաւ Երուանդին նահատակութեան բոթը՝ Ստեփանակերտէն: Երուանդ կամաւոր գինուորագրուած է՝ մասնակցելու համար Արցախի

բանակին Ատրպէյճանի դէմ պատերազմին: Երուանդին հայրենասիրութեան տրամադրութիւնները եւ չափանիշերը տեսած էի: Գիտեմ թէ ով էր: Երուանդն ալ իր համոզմունքները տարաւ մինչեւ վերջ՝ յար եւ նման եղբօրը, Նորայրին: Նահատակութիւն:

Եթէ Երուանդ իր ետին կը ձգէ երիտասարդ կողակիցը եւ փոքր երեխան, բայց կայ նաեւ ծնողքը: Հայրը ու մայրը, որոնք երկու գաւակ կորսնցուցին իրենց ողջութեան ժամանակ եւ անցնող չորս տարիներուն ընթացքին: Մարդկային միտքը եւ հոգին չեն կրնար շաղկել այս ցաւը: Ի՞նչ պիտի գրեմ իմ սիրելի բարեկամիս՝ Մի քայլ էլ, որպէս ցաւակցական գիր:



Դժուար պիտի ըլլայ գտնել բառերը սփոփելու եւ մխիթարելու հայր Մի քայլ էլ իր երկրորդ գաւակին նահատակութեան համար:

Համայն հայութիւնը կը հետեւի արցախեան պատերազմի զարգացումներուն եւ լուրերուն: Երուանդին նման շատ են երիտասարդ հայ տղաքը, որոնք իրենց կեանքերը կը գոհեն հայրենի հողին համար: Բայց հողէն աւելի, հայուն ապրելու հրամայականին համար:

Սուսաննա Մկրտչեանը իմ գործակիցս է որ կ'ապրի Երեւան: Սուսաննան հայրենասէր կին է եւ մայր, որ կը տազնապի հայրենիքի իրավիճակով, բայց մանաւանդ երիտասարդ հայ տղոց մահուամբ: «Թող զիս բանակ տանին քան մեր երիտասարդ տղաքը, որոնք իրենց մատղաշ տարիքին կը մահանան»: Սուսաննան կուլար հեռաձայնին վրայ հետս խօսած ժամանակ, եւ դուրս կը հանէր իր սրտին ու հոգիին ցաւը: Ցաւը՝ երիտասարդ կեանքերուն, որոնք մէկը միւսին ետեւէն կ'երթան յաւիտեանակամութեան:

Բայց պատերազմը տակաւին կը շարունակուի: Հայկական բանակին ռազմական նուաճումները եւ սխրագործութիւնները մեծ են:

Կը զարմանաս, բայց նոյնքան կը զգանչանաս: Արցախ-Հայաստան երեք միլիոն բնակչութիւն ընդէմ Ատրպէյճան-Թուրքիա իրենց աւելի քան ինիսուն միլիոն բնակչութեամբ: Ու տակաւին հաշուած գինական-ռազմական կարողականութիւնները: Այս անհաւասար թիւի եւ ուժի համեմատութիւններով պատերազմը կը շարունակուի: Կը նայիմ Աստուածաշունչին մէջ Դաւիթի ու Գողիթի մենամարտին, որ ինչքան անհաւասար էին ուժերու կարողականութիւնները: Բայց Դաւիթ մղեց այս անհաւասար կռիւը եւ յաղթեց: Յաղթեց, որովհետեւ համոզուած էր Յոյսին ճշմարտութեան եւ արդարութեան: Դաւիթ մարտնչեց եւ յաղթեց:

Հայը այսօր նոյն այս մենամարտ-պատերազմին մէջ է:

Հայը մինակը՝ անհաւասար թիւով եւ ուժով: Ու տակաւին բոլոր աշխարհ կը դիտէ այս անհաւասար պատերազմը: Հոսկէ-հոսկէ կը հնչեն գինադադարի կոչեր՝ քիչ մը մեղմ ձայնով: Բայց հայը կը շարունակէ պատերազմը: Ան կը հաւատայ իր քրիստոնէական ու ազգային ինքնութեան: Ան կը հաւատայ իր ռազմական ուժին բայց նաեւ իր երիտասարդ տղոց: Նորայր, Երուանդ, ու շատեր: Երիտասարդ տղաք, որոնք իրենց մատղաշ կեանքերը կը դնեն հայուն ապրելու եւ գոյատեւելու հրամայականին: Լինելն է հայուն միակ ընտրանքը եւ ճանապարհը: Ինչպէս վարչապետ Փաշինեան ըսաւ, «Մենք Տէր Զօրի ճամբորդ չենք»:

Եգնիկ Արք. Պետրոսեան՝ հեռաձայնային խօսակցութեանս ըն-



թացքին, հոգեպէս գոտեպնդեց զիս. «Պիտի յաղթենք, Հրայր»: Անդրանիկ Մարտոյեանը՝ աւետարանչական գրասենեակի տեղեկատուութեան բաժնի պատասխանատուն ըսաւ. «Մեր կորովը բարձր է,

Հրայր»: Մարիանա Աբրէսեանը՝ Հայաստանի մէջ գործակիցներէս, այսպէս արտայայտուեցաւ. «Կը փորձենք հասնիլ Արցախի մեր ժողովուրդի կարիքներուն եւ տարբեր ձեւերով»: Կորով, տրամադրութիւն եւ պատրաստակամութիւն կուզան աւելնալու հայուն ռազմական կարողականութեան վրայ սրսկելով աւելի հաւատք: Այս այն հաւատքն է, ուր դուրս կը հանէ Յոյսը: Յոյսը՝ ուժը հայուն կեանքերուն համար, որպէսզի հայը ապրի եւ վերապրի իր ազգային արժանապատուութեան մէջէն:

Պարտիմ վերադառնալ Ստեփանակերտ եւ իմ բարեկամ Մի քայլ էլին: Ան Նորայրին նկարին կողքին երեւի այսօր պիտի գետեղէ նաեւ իր երկրորդ գաւակին՝ Երուանդին նկարը: Ամէն օր Մի քայլ էլ պիտի ապրի իր երկու գաւակներուն յիշատակը: Իր ցաւը սեղմելով եւ արցունքերը խեղժելով պիտի սպայ իր գաւակներուն կորուստը: Բայց գիտեմ Մի քայլ էլ: Ան պիտի չընկրկի: Գիտեմ իր հաւատքը Աստուծոյ եւ հայ ժողովուրդին նկատմամբ: Ան պիտի կառչի, պիտի տգնի եւ պիտի հասնի ու տեսնէ Յոյսը: Յոյսը Արցախին, Հայաստանի եւ հայուն ապրելու տեսլականին: Այն Յոյսը, որուն համար իր գաւակները եւ մեր բոլոր հայ տղաքը իրենց կեանքերը գոհեցին ու տակաւին:

Թող որ այս քանի մը տողերը ըլլան մխիթարական խօսքեր սիրելի Մի քայլ էլին: Բայց նաեւ բոլոր մեր Արցախի հայ ժողովուրդին: Արցախի ցաւը բոլոր հայունն է հաւասարապէս: Իսկ Յոյսը՝ հայուն կեանքը ապրելու գրաւականն է: Հայուն կեանքը որ ճշմարտութեան եւ արդարութեան համար միայն կը կենայ: Կեանք կերտելու եւ ոչ երբեք սպաննելու:

Այս Արցախի Ցաւը եւ Յոյսն են: Ցաւը Արցախին բայց նաեւ համայն հայութեան եւ աշխարհով մէկ: Իսկ Յոյսը, նոյնպէս հայունն է: Այս Յոյսը կարելի չէ սակարկել: Ու տակաւին ինչ խօսք քաղաքականացնել: Ան կը մնայ իրական եւ հարազատ: Հայը այսօր կը պատերազմի իրականացնելու համար իր Յոյսը: Այս ընթացքին ան կը շարունակէ Ցաւիլ:

Յարգանք բոլոր մեր քաջամարտիկներուն, որոնք իրենց կեանքերը տուին ու տակաւին Արցախի Ցաւին եւ Յոյսին:

Արցախի Ցաւը եւ Յոյսը: Անպայմանօրէն հայուն: Արցախ, Հայաստան եւ Սփիւռք:

Պիտի յաղթենք:

**Ստացուած Գիրքեր**

Շնորհակալութեամբ ստացանք Գէորգ Լ. Քէօշկէրեանի հեղինակութեամբ հրատարակուած «Հայկական Ասացուածքներ» թրգերէնէ թարգմանուած 120 էջերէ բաղկացած հատորը: Հատորին մէջ ընդգրկուած են շուրջ 186 ասացուածքներ, որոնք թարգմանուած են թէ Հայերէնի եւ Անգլերէնի:

Գիրքին մէջ կան նաեւ հայկական առասպելներ Հայերէն եւ Անգլերէն լեզուներով:

**ՎԱՐՁՈՒ ՄՐԱՎ**

ՓԱՍՍՏԻՆԱՅԻ ՄԷՁ (200 ՀՈԳԻ ՎԱՍԱՐ)

**ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ՎԱՍԱՐ**

**1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104**

**(626) 797-7680**



# Լեռնային Ղարաբաղի ճակատագիրը Ներկայի Ահաւոր Պատերազմը Դեկտեմբեր 10, 1991 - Սեպտեմբեր 27, 2020

«Այսօրուանից Հայաստանի եւ Ատրպեյճանի միասին սահմանները յայտարարուած են վերացուած, եւ Լեռնային Ղարաբաղը, Ձանգեզուրը եւ Նախիջեւանը ճանաչուած են Հայկական Սոցիալիստական Հանրապետութեան անքակտելի մասը»

**Ն. ՆԱՐԻՍԱՆՈՎ  
Նախագահ Ատրպեյճանի  
1920 Դեկտեմբեր 10**

**ԴՈԿՏ. ՋԱԻԷՆ Ա ՔՅՆՅ.  
ԱՐՁՈՒՄԱՆԵԱՆ**

### Ղարաբաղը Այսօր

Խոստովանանք որուն հաւատալ պէտք էր: Լսելի կը դարձնենք Նարիմանովը ներկայ իշխանութիւններուն որ գիտնան թէ ի՞նչ ըսին եւ սակայն ի՞նչ կը կատարեն այսօր: Ահաւոր պատերազմ եւ խոստանադրութիւն: Պատմական Արցախի Նահանգն է Լեռնային Ղարաբաղը որ 30 տարիներ առաջ քաջարի դիմադրութենէ ետք վերստացաւ իր անկախութիւնը եւ դարձաւ Արցախի Հանրապետութիւն, արեան բարձրագոյն գինով, սրբագրելով անցեալի մեծ գեղծարարութիւնը՝ վերջնական հաշիւը տալով Նարիմանովի խոստովանանքին:

Ծանօթ է բոլորիս որ Ղարաբաղի հայութիւնը 1991 դեկտեմբեր 10-ին որոշեց միանալ Հայաստանի Հանրապետութեան բաժնուելով Ատրպեյճանի խորհրդի հովանաւորութենէն, եւ երեք տարուան կռիւներէ ետք 1994 մայիս 12-ի հրադադարով մինչեւ այսօր կը մնայ անկախ տիրոջ թրպէս Արցախ-Ղարաբաղ, թէեւ միշտ թշնամիին եւ համաշխարհային վերապահութեան հայեացքին ներքեւ: Որպէս անկախ հանրապետութիւն Ղարաբաղը իբրեւ այդպիսին տակաւին կը մնայ անճանաչելի՝ պաշտպանութեանը ներքեւ Հայաստանի Հանրապետութեան ու բանակին:

### Կովկաս Կը Վտանգուի

Տաս օրեր անցան Հարաւային Կովկասի յանկարծական եւ ամենին կործանարար պատերազմէն ի վեր ընդմէջ Ատրպեյճանի եւ Արցախի Հանրապետութիւններուն: Յայտարարուած սաստիկ ուժեղացումներով կը քանդուի Ստեփանապոլիսը ու շրջանի հայաբնակ գիւղերը, եւ մեծ տէրութիւններ ինչի՛ կը սպասեն հայոց իրաւունքն ու արդարութիւնը պաշտպանելու համար, ո՛չ թէ խօսքով միայն, այլ բանակի ուժով: Վերջին լուրերէն տեսանք իրանի տասնեակ մը հրասայլեր որոնք կ'ողողուին դէպի Ղարաբաղեան սահման ի պաշտպանութիւն Հայաստանի եւ Արցախի բանակներուն: Իսլամ դրացին առաջինը ըլլալով գործնապէս կը գորակցի ուժով եւ բանակով, իսկ քրիստոնեայ կարծուած աշխարհը կ'մ կը գորակցին Ատրպեյճանին եւ կ'մ «խօսքով» անարժէք խրատներ կը բաշխեն չորս կողմ:

Եթէ Ռուսաստան սրբագրեց նախկին Սովետական կարգերու սխալները, ի՞նչ կը պակսի իրեն սրբագրելու համար նաեւ այս ներկայ կացութիւնը որ միայն որպէս «նորոգութիւն» ձրի տրուած էր Ատրպեյճանին, առանց պատմական որեւէ հիմքի: Մեծ տէրութիւններ միայն կէս բերան խրատէն ի որ կուտան: Շրջանի մեծագոյն Ռուսիան կը յանձնարար տակաւին երբ անողոք յարձակման կ'ենթարկուի

նաեւ պատմական Շուշին, ու եւջը կը մնայ նոյնքան խռովիչ ու մտահոգիչ: Պատմական, մշակութային, կրօնական եւ աշխարհաքաղաքական տուեալները բոլորովին ուրանալով Ատրպեյճան յամառօրէն կը պահանջէ Լեռնային Ղարաբաղի տարածքը, քաջ գիտնալով որ հայոց բնակավայրը եղած է ան դարեր շարունակ, եւ միայն հարիւր տարի առաջ Մարաշախտ Ստալին կատարեց անարդար այդ կոպիտ սխալը զայն կցելով Արպեյճանին, ճիշդ այնպէս ինչպէս յանձնեցին Նախիջեւանի մարզը նոյն Ատրպեյճանին: Հայաստանին յանցանքը ի՞նչ է:

Ատրպեյճան իբրեւ երկիր եւ ազգութիւն գոյութիւն չունէին մինչեւ դար մը առաջ, ինչպէս թուրքեր գոյութիւն չունէին Փոքր Ասիոյ մէջ մինչեւ ժե դար: Փռք եւ պատիւ հայորդի գործերուն որոնք պաշտպանեցին ու տակաւին կը պաշտպանեն իրենց արեան գինով հայրենիքն ու հայ ժողովուրդը, եւ սակայն նշանները կը մնան խորապէս մտահոգիչ: Աստուած մի արասցէ եթէ Ազգերին վերատիրանան Ղարաբաղի տարածքին, Հայաստան կը մնայ հալածանքի եւ ցեղասպանութեան ստոյգ վտանգին ներքեւ: Կարդացի եւ շմեցայ այն տասնեակէ երկիրներու ցանկը որոնք իբրեւ թէ կը գորակցին Ատրպեյճանին, մէջն ըլլալով չեմ հաւատար Վրաստանն եւ Իտալիան: Եթէ կէսն իսկ իրողութիւն ըլլայ այդ յայտարարուած ցանկին, դարձեալ կը մնանք առանձին: Յանկը միայն մէկ տեղ կարդացի առ այժմ: Յայտնի պիտի ըլլայ որ «ողորմութիւն» մըն ալ անոնք կը կատարեն Ատրպեյճանին «փոխան արծաթի»:

### Կեղծիքին Արծագանքը 1920 Ապրիլ 28

Այս թուականին Ատրպեյճան Սովետական տիրոջ դարձաւ եւ Նախագահ Ն. Նարիմանով, հակառակ իր հանդիսաւոր խոստովանանքին, Հայաստանի Հանրապետութիւնը տկարացնելու միտուածով ի նպատակ Սովետական ուժերու յուռաշարժումին, պահանջեց որ Լեռնային Ղարաբաղը, Նախիջեւանն ու Ձանգեզուրը Ատրպեյճանին կցուին: Ասոր համաձայն չէր սակայն Սովետական Ռուսաստանի Կեդրոնական Համայնավար Կուսակցութիւնը, պնդելով որ Հայաստանի եւ Ատրպեյճանի միջեւ վիճելի տարածութիւններուն որոնց պատկանիլը յետաձգուի մինչեւ քաղաքական բարենպաստ պայմաններու ստեղծումը: Այստեղ հնչեց կեղծիքին «արդարացուցիչ» արձագանքը:

Երբ Հայաստան Սովետական Հանրապետութիւն դարձաւ, ժամանակն էր նման անիրաւութեանց դիմադրել, եւ յաջորդ օրն իսկ յաստանի անքակտելի մաս յայտարարուեցան՝ հակառակ Նարիմանովի պահանջին: Ատրպեյճան իսկոյն 1920 Դեկտեմբեր 1-ի յայտարարու-

թութեամբ հրաժարեցաւ պնդելէ իր պահանջին վրայ՝ յօգուտ Հայաստանի Հանրապետութեան, յատկօրէն ըսելով, «այսօր- ուս- նից Հայաստանի եւ Ատրպեյճանի նախկին սահմանները յայտարարուած են վերացուած, եւ Լեռնային Ղարաբաղը, Ձանգեզուրն ու Նախիջեւանը ճանաչուած են Հայկական Սոցիալիստական Հանրապետութեան անքակտելի մասը»:

### Մարաշախտ Ստալին

Մարաշախտ Ստալին իր ձայնը սոյն որոշման միացնելով իր մէկ յօդուածին մէջ կ'ակնարկէր թէ «Սովետական Ատրպեյճանը Դեկտեմբեր 1-ին կամաւոր կերպով հրաժարուեց վիճելի նահանգներէ, եւ յայտարարեց երեք տարածքների կցումը Հայաստանին»: Տաս օր ետք, Դեկտեմբեր 12-ին, Մոսկուայի մէջ Սովետական Հայաստանի ներկայացուցիչներ՝ Ս. Տէր Գաբրիէլեան եւ Ա. Մուսիբեան հանդիպում կ'ունենային Ստալինի հետ եւ կը յայտնէին թէ «այդ հարցերը գտել են իրենց ճիշդ լուծումը»:

Դրական այս վճիռը ողջունելի եղաւ անշուշտ Հայաստանի կառավարութեան կողմէ, որուն Նախագահը՝ Մարգրիս Կասեան, Պաքու Նարիմանովին կը հեռագրէր «եղբայրական հրճուանքով» լսած ըլլալու մասին Ատրպեյճանի Դեկտեմբեր 1-ի որոշումը հայկական երեք նահանգներուն վերաբերեալ: Այդ որոշումին հետեւեցաւ պաշտօնական յայտարարութիւն մը «Խորհրդային Հայաստան» օրաթերթի 1921 Յունիս 19-ի համարին մէջ, ուր կը տեղեկացուէր թէ «յետ այսու Լեռնային Ղարաբաղը հանդիսանում է Հայկական Սովետական Հանրապետութեան անքակտելի մասը»: Միաժամանակ Հայաստանի կառավարութիւնը Ասքանազ Մուսիբեանը կը նշանակէր արտակարգ լիազօր Լեռնային Ղարաբաղի:

### Մեծ Յուսախաբուրթիւն

Հայ ժողովուրդի ուրախութիւնը խոր յուսախաբութեան վերածուեցաւ կարճ ատեն մը ետք: Ատրպեյճան իր դիրքն ու առած որոշումը նենգաբար փոխեց, եւ Նարիմանով կրկին պահանջեց որ Ղարաբաղը Ատրպեյճանի կազմէն ներս մտնէ, պատրուակելով որ գործերու նման ընթացքով «Ատրպեյճանում մենք վերականգնում ենք հակասովետական խմբերին»: 1921 Յունիս 26-ին Թիֆլիսէն Կովկասեան Կեդրոնական Խորհուրդի նախագահ Սերգօ Օրջոնիկիցէ եւ Վրաստանի լիազօր ներկայացուցիչ Կիրով հեռագրեցին Նարիմանովին «չաւնելու որեւէ քայլ, այլ ղեկավարուիլ բարեկամական յարաբերութիւններ հաստատելու սկզբունքով», յիշեցնելով նաեւ որ «ոչ մի հայկական գիւղ պէտք է միանայ Ատրպեյճանին, ինչպէս նաեւ ոչ մի մահմետական գիւղ չի կարելի միացնել Հայաստանին»:

Հարցը աւելի չկնճռոտած կը յանձնուի Կովկասեան Կեդրոնական Վարչութեան, ուր ներկայ էր նաեւ մարաշախտ Ստալին: Հոն եւս հայաստանս որոշում կայացաւ եւ ձայներու մեծամասնութեամբ որոշուեցաւ Լեռնային Ղարաբաղը մտցնել Հայաստանի կազմին մէջ, որուն ի նպաստ քուէարկեցին Օր-

ջոնիկիցէ, Կիրով, եւ Ալեքսանդր Միսանիկեան:

### Նարիմանով կը դրժի իր խոստումը

Նարիմանով կրկին բողոք բարձրացնելով Կովկասեան ժողովի յաջորդ նիստին, վերատեսութեան ենթարկեց Ղարաբաղի կցման հարցը: Հոն նախապէս առնուած հայաստանս որոշումը կոպտօրէն գլխիվայր շրջեցաւ «առանց քննարկման եւ քուէարկութեան»: Տիրահուշակ այս որոշումին մէջ կ'ըսուէր թէ «եյնելով մահմետականների եւ հայերի միջեւ ազգային խաղաղութեան անհրաժեշտութիւնից, եւ վերին ու ներքին Ղարաբաղի տնտեսական կապից» Լեռնային Ղարաբաղը թողուլ Ատրպեյճանին, անոր տալով մարզային լայն իրաւասութիւն՝ Շուշի մայրաքաղաքով: Ժողովը այս որոշման յանգած էր Ստալինի ճնշման եւ Նարիմանովի սպառնալիքին ներքեւ, վերջինս յայտարարելով որ «եթէ Լեռնային Ղարաբաղ տրուի Հայաստանին, ապա Ատրպեյճան ցած է դնում ամէն պատախանաստուութիւն»:

Այս դժբախտ որոշումով, որուն դէմ բողոքեց Հայաստանի Հանրապետութիւնը, հայերով բնակեցուած եւ վաղնջական հայկական հողամասը արհեստականօրէն եւ վատօրէն բաժնուեցաւ Հայաստանէն: Իսկ 1923-ին Ստալինի վճիռով Ղարաբաղի մարզի կազմաւորման ատեն Ղարաբաղ սահման չէր ունենար Հայաստանի հողին հետ: Այս սուհանդերձ, հայու անմեռ յոյան ու իղձը Ղարաբաղը միացնելն էր Հայաստանի Հանրապետութեան որուն մասն էր անցեալին: Հայ ազգին ու Հայաստանեայց Եկեղեցիին արդար հպարտութիւնը կը կազմէ այսօր վիրաւոր Ստեփանակերտն ու Շուշին որպէս մնայուն Հանրապետութիւն եւ Արցախի Հայ Եկեղեցական Թեմ:

### Ստալին եւ Նարիմանով Սխալած

Ըսելու ենք այսօր պոռոտախօս Ատրպեյճանին եւ հանգուցեալ Սովետ Միութեան որ ոչ միայն սխալեցան իրենց հաշիւներուն մէջ, այլ նաեւ խայտառակուեցան աշխարհի առջեւ՝ շնորհիւ հայորդի քաջերուն եւ Ղարաբաղ բնակող մեր հայրենակիցներու կամքին եւ հաւատքին, հակառակ տեղի ունեցած ամենավերջին մահաբեր աւերածութիւններուն: Այսօր եւրոպական ազգեր կը միջամտեն առանց հիմնական քայլ մը առնելու, պարզապէս որովհետեւ այդ քայլին առիւծի բաժինը առնուեցաւ Հայաստանի եւ Ղարաբաղի հայորդիներուն կողմէ, իրենց ձեռքը թռչունի բաժինը միայն բռնելով: Հայութիւնը հոն իր հողին վրայ է, թռչունները տեղ չունին, ինչպէս հող չունի նաեւ Ատրպեյճան: Քաղաքական եւ կրօնական գարթօնք ապրեցաւ Լեռնային Ղարաբաղը որպէս պետութիւն պատմական Արցախի իր դրօշով եւ Նախագահով, եւ որպէս Հայ Եկեղեցու թեմ՝ շնորհիւ Երջանկայ յիշատակ Տ.Տ. Վազգէն Ա. Հայրապետին, որ վերահաստատեց թեմը իր քաջարի թեմակալ Առաջնորդ Տ. Պարգեւ Արքեպիսկոպոս Մարտիրոսեանի մշտական ներկայութեամբ:



### Ազգերու Լիգա. Հայաստան - Վրաստան՝ 2:2



Ֆուտպոլի Հայաստանի հաւաքականը Ազգերու Լիգայի C բաժանմունքի երկրորդ խումբի երրորդ շրջանին մրցեցաւ Վրաստանի հաւաքականին հետ:

Հայաստանի մէջ ռազմական դրութեան պատճառով Լեհաստանի Տիխի քաղաքին մէջ կայացած խաղի ընթացքին սպանացի գլխաւոր մարզիչ Խոակիմ Կապառուսի ղեկավարած Հայկական խումբը բաւարարուեցաւ ոչ ոքի արդիւնքով՝ 2:2:

Մրցումի առաջին կողմը նշանակուեցաւ 6-րդ վայրկեանին յարձակող Տիգրան Բարսեղեանի փոխանցումէն յետոյ յետոյ Խորէն Բայրամեանը գրաւեց Վրաստանի դարպասը:

Երկրորդ կիսախաղին Վրաստանի հաւաքականը երկու կողմը նշանակելով անցաւ առաջ:

88-րդ վայրկեանին Հայաստանի հաւաքականը նշանակեց երկրորդ կողմը՝ խոստովելով պարտութենէն: Ազգային հաւաքականի կազմէն ներս իր 30-րդ կողմը նշանակեց իտալական «Ռոմայի» կիսապաշտպան Հենրիխ Մխիթարեանը, որ ճշգրիտ իրականացուց 11 մեթրանոցը:

Հայաստանի հաւաքականի ֆուտպոլիստները խաղցան սեւ թեւակապերով՝ ի յիշատակ Հայաստանի եւ Արցախի մէջ զոհուածներուն: Խմբակի միւս մրցումներուն, Էստոնիա եւ Հիւսիսային Մակեդոնիա խաղցան ոչ ոքի՝ 3:3:

Խմբակի առաջատարներն են Հիւսիսային Մակեդոնիայի եւ Վրաստանի խումբերը՝ 5-ական միաւորով: Հայաստանը 4 միաւորով երրորդն է, Էստոնիան կ'եզրափակէ մրցաշարային աղիւսակը՝ 1 միաւոր:

Յաջորդ մրցումին Հայաստանի հաւաքականը Հոկտեմբերի 14-ին կը հիւրընկալուի Էստոնիայի խումբէն, Վրաստանի հաւաքականը՝ Հիւսիսային Մակեդոնիայէն:

### Ազգերու Լիգա. Ատրպէյճան Պարտուեցաւ

Ֆուտպոլի Ազգերու Լիգային մրցումներուն գծով Հոկտեմբերի 10-ին Ատրպէյճանի հաւաքական պարտութիւն կրեց Չեռնոգորիայի դէմ՝ 2:0 արդիւնքով:

9-րդ վայրկեանին խաղի հաշիւը բացաւ Ստեֆան Եովետիչը, իսկ 71-րդ վայրկեանին Իգոր Իւանովիչ կրկնապատկեց իր խումբի առաւելութիւնը:

Խմբակի միւս մրցումին Լիւքսեմպուրկ 2:0 արդիւնքով յաղթեց Կիպրոսին:

### Նեյմարը Գերագանցած է Մեսիի Ռեկորդը



Պրագիլիայի հաւաքականի եւ ֆրանսական ՊԱԺ-ի յարձակող Նեյմարը Պոլիվիայի հաւաքականի դէմ աշխարհի առաջնութեան ընտրական փուլի առաջին շրջանի խաղի ընթացքին 18 անգամ շրջանցած է մրցակիցին, կը հաղորդէ Opta Javier-ը:

Այդ լաւագոյն ցուցանիշն է այն բանէն յետոյ, երբ Opta-ն 2009/2010 թթ. մրցաշրջանէն սկսած է հաշուել մրցակիցին շրջանցելու վիճակագրութիւնը: Նախորդ մրցանիշակիրը «Պարսելոնայի» եւ Արժենթինի հաւաքականի յարձակող Լիոնել Մեսին էր, որ 2011-ին 15 անգամ մրցակիցին շրջանցած էր Գոլոմպիայի հաւաքականի հետ խաղի ընթացքին:

Յիշեցնենք, որ Պրագիլիայի հաւաքականը Պոլիվիային յաղթած էր 5:0 հաշուով, իսկ Նեյմարը դարձած էր 2 կոլային փոխանցման հեղինակ:

### Յովհաննէս Բաչկովը Յաղթանակը Նուիրած է Հայ Զինուորին

Բռնցքամարտի 2018թ. Եւրոպայի ախոյեան, Մինսկ-2019 Եւրոպական խաղերու յաղթող, աշխարհի առաջնութեան կրկնակի պրոնզէ մետալակիր Յովհաննէս Բաչկովը (64 կգ) նորամուտը յաղթանակով նշած է արհեստավարժ ռինկի խաղի ընթացքին:



Տուպայի մէջ տեղի ունեցած արհեստավարժ բռնցքամարտի Rottunda Rumble IV երեկոյի ընթացքին Բաչկովը մրցավարներու միաձայն որոշումով յաղթած է 32-ամեայ վենեզուէլացի Սամուէլ Գոնսալեսին:

Հայ բռնցքամարտիկը ռինկ դուրս եկած է Արցախին նուիրուած երգի ներքոյ: Մենամարտի վերջաւորութեան ան ռինկ վերադարձած է Հայ զինուորին նուիրուած շապիկով, որուն վրայ պատկերուած են Հայաստանը ու Արցախը: «Հայաստանի պաշտպաններ, մեր անպարտելի զինուորներ, մենք կանգնած ենք կողքին», - շապիկի վրայ հետեւեալ գրառումն էր:

Սամուէլ Կոնսալեսը փրոֆեսիոնալ ռինկի վրայ հանդէս կու գայ 2013 թուականէն, ունեցած է 29 մենամարտ, տարած է 22 յաղթանակ (13-ը նոկաուտով) եւ կրած է 7 պարտութիւն:

Յիշեցնենք, որ Յուլիան Յովհաննէս Բաչկովը 3 տարուայ պայմանագիր կնքած է MTK Global ընկերութեան հետ: Աւելի վաղ ան NEWS.am Sport-ի թղթակցի հետ զրոյցի ընթացքին նշած էր, որ վաղուց ցանկացած է տեղափոխուիլ արհեստավարժ ռինկ: Ըստ պայմանագրի՝ արհեստավարժ ռինկի վրայ հանդէս գալուն գուզահեռ, Հայ բռնցքամարտիկը կը նախապատրաստուի նաեւ Թոքիոյի Ոլիմպիական խաղերու վարկանիշային մրցաշարերուն:

### Նատալը Յաղթեց Չոկովիչին Եւ 13-րդ Տիտղոսը Նուաճեց «Ռուան Գարոսի» Սէջ

Սպանացի Ռաֆայէլ Նատալը 13-րդ անգամ հռչակուեցաւ թենիսի Ֆրանսայի բաց առաջնութեան ախոյեան: Եզրափակիչի խաղին Ռաֆայէլ Նատալը մրցեցաւ աշխարհի առաջին ռակետ, սերբ Նովակ Ջոկովիչի հետ եւ առաւելութեան հասաւ երեք սեթով: 2 ժամ 41 րոպէ տեւած մրցախաղն աւարտեցաւ 6:0, 6:2, 7:5 հաշուով:



Ռաֆայէլ Նատալը դարձաւ «Մեծ սաղաւարտի» մրցաշարերու 20-ակի յաղթող՝ կրկնելով շուէցարացի Ռոջեր Ֆեդերերի նուաճումը: Նատալը նաեւ 100-րդ յաղթանակը արձանագրեց «Ռուան Գարոսի» մէջ տեղի ունեցած հանդիպումներու ընթացքին:

### 10 Հազար Մետր Վազքի Ընթացքին Գրանցուած է Աշխարհի Ռեկորդ

Ուկանդացի աթլետ Ջոշուա Չեպտեգէին սահմանած է 10 հազար մետր վազքի աշխարհի մրցանիշ: Սպանական Վալենսիայի մէջ տեղի ունեցած վազքի մրցումի ընթացքին 24-ամեայ մարզիկը արձանագրած է 26 վայրկեան եւ 11 երկվայրկեան արդիւնք:



Նախորդ մրցանիշը կը պատկանէր Եթովպիան ներկայացնող Քենենիսա Պեկելէին, որ 2005 թուականին 10 հազար մետրը յաղթահարած էր 26 վայրկեան 17,53 երկվայրկեանի մէջ:

Յիշեցնենք, որ Ջոշուա Չեպտեգէին աշխարհի գործող ախոյեանն է 10 հազար մետր վազքի մէջ:

### Սուարես. Խիստ Վիրաւորուած Եմ «Պարսելոնայէն»

Մատրիտի «Աթլետիկոյի» ուրուկուայցի կիսապաշտպան Լուիս Սուարեսը յայտարարած է, որ մամուլէն տեղեկացած է, որ չի մտնէր խումբի գլխաւոր մարզիչ Ռոնալդ Կումանի ծրագրերուն մէջ:

«Անոնք ինձի հետ վարուեցան շատ սխալ: Ես մամուլէն տեղեկացայ, որ չեմ մտնէր Ռոնալդ Կումանի ծրագրերուն մէջ: Այդ ինձի եւ ընտանիքիս համար խիստ վիրաւորական էր:

«Ես 6 տարի անցուցած եմ «Պարսելոնայի» հետ եւ միշտ կ'ըսէի, որ ակումբը պէտք է երիտասարդ յարձակող ձեռք բերէ, սակայն ոչ ոք այդպէս ուշադրութիւն չդարձուց իմ խօսքերուն», - Սուարեսի խօսքը կը փոխանցէ Goal.com-ը:

Յիշեցնենք, որ 33-ամեայ յարձակողը մատրիտեան ակումբի հետ կնքած է 2 տարուայ պայմանագիր:



### Ոչ եւս է ԸՆկ. Տիգրան Սարաֆեան

Հոկտեմբեր 7-ին, 93 տարեկանին Լուս Անճելլուսի մէջ իր մահականացուն կնքեց Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան Կեդրոնական Վարչութեան երկարամեայ անդամ, Հայ Մարմնամարզական Միութեան (Հ.Մ.Մ.) երկարամեայ ատենապետ եւ Հ.Մ.Մ.-ի պատմագիր քերու հեղինակ Ընկ. Տիգրան Սարաֆեանը:

Ընկ. Սարաֆեան իր ամբողջ գիտակցական կեանքի ընթացքին եղաւ հաւատարմոր անդամ իր պատկանած Կուսակցութեան ու նուիրեալը անոր գաղափարախօսութեան: Ան Միջին Արեւելքի Հայ համայնքներէն ներս երկար տարիներ ծառայեց սփիւռքահայ երիտասարդութեան հայրենասիրական դաստիարակութեան գործին:

Կեանքի վերջին տարիներուն Ընկ. Սարաֆեան հասցուց գրելու Հ.Մ.Մ.-ի պատմութիւնը՝ երկու հատորներով:

Ան Լիբանանի քաղաքացիական պատերազմի տարիներուն կարեւոր դերակատարութիւն ունեցաւ Հայկական թաղամասերու պաշտպանութեան եւ ազգային համերաշխութեան միջնորդի պահանջներն իրականացնելով:

Տիգրան Սարաֆեան կեանքին կը հեռանայ իր ետին ձգելով կուսակցական, ազգային հասարակական ու մարզական բնագաւառներուն մէջ հարուստ ժառանգութիւն մը:

### ԳՈՅԺ

Հ.Մ.Մ. Կեդրոնական Վարչութիւնը կը գուժ իր երկարամեայ նախկին ատենապետ՝ ԸՆկ. ՏԻԳՐԱՆ ՍԱՐԱՖԵԱՆ-ի մահը, որ պատահեցաւ 7 Հոկտեմբեր 2020-ին, Միացեալ Նահանգներու մէջ

### ՑԱՒԱԿՑԱԿԱՆ

Խոր ցաւով իմացանք Ս.Դ. Հնչակեան Կուսակցութեան վաստակաշատ անդամ եւ Հ.Մ.Մ.ի Կեդրոնական Վարչութեան նախկին նախագահ եւ երկարամեայ հասարակական գործիչ Ընկ. Տիգրան Սարաֆեանի մահը, որ պատահեցաւ 7 Հոկտեմբեր 2020, յետ երկարատեւ հիւանդութեան:

Այս տիւրը առիթով մեր խորագրաց ցաւակցութիւնները հանգուցեալի այրիին՝ ընկերուհի Վարդուհի Սարաֆեանին, իր զակին Ս.Դ.Հ.Կ. Կեդր. Վարչութեան ատենապետ ընկ. Տօքթ. Համբիկ Սարաֆեանին, համայն հարազատներուն եւ ընկերներուն:

**Ս.Դ.Հ.Կ. ԱՐԵՒՄՏԵԱՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՎԱՐԻՉ ՄԱՐՄԻՆ**

### ՑԱՒԱԿՑԱԿԱՆ

Ընկ. Տիգրան Սարաֆեանի մահուան տիւրը առիթով Հ.Մ.Մ.ի Կլինտոնիլ եւ Փասատինայի մասնաճիւղերու անդամներն ու Տիկնանց Օթանդակ Մարմինը իրենց խորագրաց վշտակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի ընտանեկան համայն պարագաներուն, մասնաւորաբար Ընկ. Տօքթ. Համբիկ Սարաֆեանին:

### ՑԱՒԱԿՑԱԿԱՆ

Իր երկարամեայ եւ մտերիմ բարեկամին՝ Տիգրան Սարաֆեանի մահուան տիւրը առիթով, Տիգր Ալպէրթ Մինասեան իր խորագրաց ցաւակցութիւնները եւ վշտակցութիւնը կը յայտնեն հանգուցեալի համայն հարազատներուն եւ պարագաներուն, յատկապէս Տիկնոջ՝ Վարդուհի Սարաֆեանին եւ զակներուն՝ Տէր եւ Տիկ. Համբիկ եւ Նայիրա Սարաֆեանին եւ զակներուն, Տէր եւ Տիկ. Յարութ եւ Նորա Միհրանեանին եւ զակներուն, Տէր եւ Տիկ. Արթիւր եւ Հուրի Սաթեանին եւ դուստրին, ինչպէս նաեւ ՀՄՄ-ի մեծ ընտանիքին: Առ այդ կը նուիրէ՝

Հ.Մ.Մ.-ին 200 տոլար,  
«Հայաստան» Համահայկական Հիմնադրամի Արցախի Ֆոնտին.  
Արցախի Ֆոնտին 200 տոլար,  
եւ Մասիս-ի ֆոնտին 100 տոլար:

### Տիգրան Սարաֆեանի Ամնեռ Յիշատակին

Տիգրան Սարաֆեանը «Նոր Վերնատուն» ակումբի հիմնադիրներէն էր եւ անոր բազմամեայ ատենապետը: Վերջին արտայայտութիւնը կրնայ շատերու հեզնական ժպիտ առաջացնել, որովհետեւ Տիգրան Սարաֆեանի պէս մէկու մը համար, որ երկար ու բեղմնաւոր կեանքի ընթացքին եղած է քանի մը ազգային ճանչցուած կառուցներու ղեկավար, ատասնեակ մը անդամներէն բաղկացած խմբակի մը առաջնորդը ըլլալը նման է ինչպէս ասացուածը կ'ըսէ. «Թնդանթէն ճնճողուկի վրայ կրակելուն»: Սակայն, անոնք որ մօտէն ծանօթ են «Նոր Վերնատուն»ին, գիտեն անոր ստեղծած մեծ հետաքրքրութիւնը շրջապատին մէջ՝ վկայ այն բազմաթիւ անուանի հայրենակիցները, որ այցելու հիւրեր կ'ըլլան մեր հաւաքներուն:

Տիգրան Սարաֆեան ազգային գործիչի մասին շատ խօսքեր պիտի ըսուին՝ նաեւ մամուլով, իսկ մենք այսու կ'ուզենք փաստել, որ մեծ մարդը փոքր գործերու մէջ ալ կրնայ իր մեծութիւնը դրսեւորել: Ընկերոջ յիշատակին «Նոր Վերնատունը» կը նուիրէ \$200 «Մասիս»ի ֆոնտին \$500 Հայաստան Համահայկական Հիմնադրամին

### ՄԱՐԱԶԴ



ՏԻԳՐԱՆ ՍԱՐԱՖԵԱՆ (Ծնեալ 1927, Պէյլան)

Խոր ցաւով կը գուժենք մեր սիրեցեալ ամուսնոյն, հօր, մեծ հօր, հօրեղբօր, մօրեղբօր եւ հարազատին՝ ՏԻԳՐԱՆ ՍԱՐԱՖԵԱՆԻ մահը, որ պատահեցաւ Չորեքշաբթի, 7 Հոկտեմբեր 2020-ի առաւօտեան:

Եկեղեցական կարգը տեղի ունեցաւ Երեքշաբթի, 13 Հոկտեմբերին, Երեկոյեան ժամը 6:00-ին, Սրբոց Ղեւոնդեանց Մայր Տաճարին մէջ, 3325 NorthGlenoaks Blvd. Burbank, CA 91504:

Սգակիրներ՝ Այրի Տիկին Վարդուհի Թաթուլեան Սարաֆեան Ջաւահիր՝ Տէր եւ Տիկ. Տօքթ. Համբիկ եւ Նայիրա Սարաֆեան եւ զակները՝ Նայիրա եւ Անթոնի-Տիգրան Դուստրը՝ Տէր եւ Տիկ. Յարութ եւ Նորա Միհրանեան եւ զակները՝ Սարին, Յակոբ եւ Տիգրան Դուստրը՝ Տէր եւ Տիկ. Արթիւր եւ Հուրի Սաթեան եւ դուստրը՝ Լիանա եւ համայն Սարաֆեան, Թաթուլեան, Գարսեւանեան, Սաթեան, Միհրանեան, Պաստաճեան, Խաչատուրեան, Փեհլիվանեան, Թէօքմէճեան, Սեմերճեան, Խայեան, Այվազեան եւ Ապու Շահլա ընտանիքներ: «Նկատի ունենալով համաճարակի պայմանները, ցաւակցութիւնները կ'ընդունուին հեռաձայնային կապով: Փոխան ծաղկեպսակի, կը խնդրուի նուիրատուութիւնները կատարել «Հայաստան» Հիմնադրամի Արցախի Ֆոնտին:

### ՑԱՒԱԿՑԱԿԱՆ

Յարգելի Սարաֆեաններ Տիկ. Վարդուհի, Համբիկ, Հուրիկ եւ Նորա ցաւակցում եմ սիրելի հայրիկի՝ Տիգրան Սարաֆեանի մահուան կապակցութեամբ:

Վերջին տասնօրեակում, ունենալով բացառիկ հարուստ մայրենի լեզու, իր անսպառ բառամթերքով դժուարանում եմ ցաւակցութիւններ գրել, սփոփանքի խօսքեր ուղղել որդեկորուս ծնողներին...

Անշուշտ, կիսում եմ ձեր կորստի ցաւը, բայց ուզում եմ միխթարանքի խօսքն ասել, որ օրինաչափ է, երբ զակին է ճանապարհում ծնողին...

Ընկ. Տիգրանը հանգիստ հոգով է հեռանում, քանզի արժանի զակներ է թողել, ովքեր ցաւով եւ հպարտութեամբ են ճանապարհում իրենց սիրելի հայրիկին դէպի յաւերժութիւն...

Միշտ Ձեր՝ Ռուզան Պետրոսեան

### ՑԱՒԱԿՑԱԿԱՆ

Իմ սիրելի Սարաֆեաններ. Տիկին Վարդուհի, Համբիկ, Հուրիկ եւ Նորա: Տիգրանի մահուան լուրը լսեցի ցաւով ու ափսոսանքով: Օրեր առաջ գրել էի Համբիկին, հարցում արել նրա մասին, չիմանալով, որ նա հիւանդանոցում է:

Եւ հա՛հ հարցմանս պատասխանը... Իմ հարազատներ, գիտեմ, որ աւելի քան մեծ է կորուստը, ցաւալի, բայց ծնունդն ու մահը Աստուծոյ գործն է: Այս պարագայում ցաւի կողքին կայ հպարտութեան եւ բաւարարուածութեան զգացողութիւն, որ պէտք է ապրէք ոչ միայն դուք, այլ մեր հանրութեան մի ստուար զանգուած:

Տիգրանը կը մնայ լրջախոս ու հաւասարակշիռ ազգային գործիչ, ով բեմեր ու հրապարակներ չէլաւ, մնաց իր փառապանծ կուսակցութեան գործունէութեան քուրաչում, որպէս մի նժար, որը հաւասակշիռ ու քով-քովի էր բերում տեսակէտներ եւ կարծիքներ, գերակայութիւն տալով ճշմարտութեանն ու հանրային շահին:

Յաւակցում եմ Սարաֆեան գերդաստանին, նրա մտերիմներին, Հնչակեան կուսակցութեանը, որի նուիրեալ զինուորն էր Տիգրանը: Վշտակից բարեկամ՝ Ռոմեն Կոզմոյեան

### ՑԱՒԱԿՑԱԿԱՆ

Ընկ. Տիգրան Սարաֆեանի մահուան տիւրը առիթով Հարաւային Գալիֆորնիոյ հայ մտաւորականներու «Շիրակաչէն» համախմբումը՝ իր խորագրաց վշտակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի կնոջ Տիկ. Վարդուհիին, ընտանեկան համայն պարագաները՝ ուն եւ մերձակներուն:

Առ այդ փոխան ծաղկեպսակի \$200 տոլար կը նուիրեն «Մասիս» շաբաթաթերթին:



ՄԱՅԱԶԴ



ԱՐԻՍՏԻՏՅԱ ԳՈՐՆԵՅՕ

Սրտի դառն կսկիծով կը գուժենք մեր սիրեցեալ ամուսնոյն, հօր, եղբօր եւ հարազատին՝ ԱՐԻՍՏԻՏՅԱ ԳՈՐՆԵՅՕՅԻ անակնկալ մահը, որ պատահեցաւ Չորեքշաբթի, 7 Հոկտեմբեր 2020-ին:

Տեսակցութիւն՝ Հոկտեմբեր 19-ի երեկոյեան ժամը 7:00-ին, Glendale Funeral Home 511 S. Central Ave. Glendale CA. 91204
Յուզարկաւորութիւնը՝ Հոկտեմբեր 20-ին, կեսօրէ ետք ժամը 3:30-ին Hollywood Hills Forest Lawn 6300 Forest Lawn Dr. Los Angeles CA. 90068

Սգակիրներ՝ Այլին Հրիփսիմէ Հուրի Խաչատուրեան Գորնեհօ եւ զաւակները Գարինա եւ Արիստիտէս Յակոբ Գորնեհօ
Մայրը եւ Հայրը Նորմա եւ Պէնճամին Քրուզ Եղբայրները՝ Տէր եւ Տիկին Պէնճամին Քրուզ
Տիայր Գարլոս Քրուզ
Տէր եւ Տիկին Ճօ Քրուզ
Մօրաքոյրը Տէր եւ Տիկին Տէյլիտ եւ Տէյլի Գամաչօ
Աներհայրն ու Աներմայրը Նորայր եւ Մարի Խաչատուրեան Աներձագերը
Տէր եւ Տիկին Միհրան Խաչատուրեան
Տէր եւ Տիկին Սեւակ Խաչատուրեան եւ Համալի Գորնեհօ, Քրուզ, Գամաչօ, Խաչատուրեան ընտանիքները, հարազատներն ու բարեկամները
Փոխան ծաղկեպսակի նուիրատուութիւնները կը խնդրուի կատարել Armenian Council of America-ին:

ՑԱՒԱԿՑԱԿԱՆ

ԱՐԻՍՏԻՏՅԱ ԳՈՐՆԵՅՕՅԻ անակնկալ մահուան առիթով Ս.Դ.Հ.Կ. Արեւմտեան Ամերիկայի Վարիչ Մարմինը, ինչպէս նաեւ Հայ Ամերիկեան Խորհուրդը (ՀԱՍԽ) իրենց խորագրաց ցաւակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի կնոջ՝ ընկերուհի Հուրիին, զաւակներուն, Տէր եւ Տիկ. ընկ. Նորայր Խաչատուրեանին Վարիչ Մարմնի անդամ Տէր եւ Տիկ. ընկ. Միհրան Խաչատուրեանին եւ ՀԱՍԽի ատենապետ Տէր եւ Տիկ. Սեւակ Խաչատուրեանին:

ՍԴՅԿ Կը Զօրակցի Ճօ Պայտընին

Շարունակուած էջ 1-էն

Ճախագահի ծաւալապաշտական նկրտումները կովկասէն ներս եւ այլուր: Ամերիկայի այլ քաղաքացիներուն նման, Ամերիկահայութիւնը եւս կը փափաքի երկրի ղեկին տեսնել հաւասարակշռուած եւ ժողովուրդի բարօրութեամբ մտահոգ ճախագահ մը, որ ունենայ յստակ ծրագիր պայքարելու Քորոնա ժահրի դէմ, վերացնելու համաճարակի տնտեսական հետեւանքները, յարգելու երկրի սահմանադրութիւնն ու օրէնքները, պաշտպանելու ազատութիւնները, պայքարելու ցեղային խտրականութեան դէմ եւ ձգտի հաստատելու համերաշխութիւն երկրէն ներս: Համոզուած ենք որ, այս դժուարին հանգրուանին Ճօ Պայտըն միակ թեկնածուն է որ պիտի կարողանայ արդարացնել Ամերիկացի ժողովուրդի ակնկալութիւններն ու յոյսերը, երկիրը վերադարձնելով ճիշդ ուղիի վրայ:

Որպէս սոցիալ դեմոկրատական սկզբունքները կրող կուսակցութիւն, մենք կը ձգտինք ընկերային արդարութեան, աղքատ եւ միջին դասակարգի իրաւունքներու պաշտպանութեան, պետական նպաստներու, երեցներու թոշակներու, նուազագոյն աշխատավարձերու բարձրացումին եւ առողջապահութիւնը ժողովուրդի բոլոր խաւերուն մատչելի դարձնելու նպատակներուն:

Մենք կը հաւատանք որ, Ճօ Պայտըն միակ թեկնածուն է, որ պիտի պաշտպանէ այդ սկզբունքները եւ պիտի կարողանայ իրագործել զանոնք, առանց անտեսելու գործարար շրջանակներու իրաւունքները, այդպիսով բարելաւելով ժողովուրդի բոլոր խաւերու տնտեսական ու ընկերային պայմանները:

Մեկնելով այս հրամայականներէն Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութիւնը իր գորակցութիւնը կը յայտնէ Ճօ Պայտընին եւ Քամալա Յարրիսին, որպէս Ամերիկայի յաջորդ ճախագահ եւ փոխ-ճախագահ, եւ կոչ կ'ուղղէ Ամերիկահայութեան իրենց զաւակներուն եւ թոռներուն աւելի լաւ ապագայ մը կերտելու նպատակով՝ քուէարկելու Դեմոկրատ կուսակցութեան թեկնածուներուն:

ՍԴՅԿ Արեւմտեան Ամերիկայի Վարիչ Մարմին

Եթէ Ատրպէյճանին Արտօճներ Ծեղական Զտոււմներ Իրականացնել

Շարունակուած էջ 6-էն

հայկական կողմը եւս կ'ընէ այդ մէկը:

3.- Թուրքիան ըսած է, որ կ'աջակցի Ատրպէյճանին: Ասիկա կը նշանակէ՞ արդեօք, որ Հայաստանը եւս կը փոր ձէ արտաքին ռազմական աջակցութիւն փնտռել:

Պ.- Կրկին կ'ուզեմ ընդգծել՝ խնդիրը Լեռնային Ղարաբաղի հայերուն հետ է, Հայաստանի հետ չէ: Թուրքիան կ'աջակցի Ատրպէյճանին: Անկեղծ ըսեմ, շատ կը փափաքէի, որ Թուրքիան Ատրպէյճանին աջակցի կը թուութեան, մշակույթի, գիտութեան, ճարտարագիտութիւններու, յարաբերութիւններ կառուցելու ոլորտներուն մէջ: Կը փափաքէի, որ Թուրքիան չիշէ իր պատմութիւնը, փորձէ ճանչնալ այն, որ 105 տարի առաջ Օսմանեան կայսրութեան վերջը Հայոց Յեղափոխութիւն տեղի ունեցաւ: Փորձէ յարաբերութիւններ ձեւաւորել կամ զանոնք բարելաւել Հայաստանի հետ: Այդ ամէնը ընելու փոխարէն անոնք ուղղակի կը հրաժարին ընդունելէ, որ ցեղասպանութիւն տեղի ունեցած է: Քանի որ անոնք ատիկա կը ժխտեն, մենք դիւանագիտական յարաբերութիւններ չունինք: Թուրքիան ոչ թէ կ'աջակցի Ատրպէյճանին, այլ դարձած է հակամարտութեան մաս, քանի որ անոնք ռազմական սարքեր, խորհրդականներ, նրթական աջակցութիւն, զէնք ուղարկած են Ատրպէյճան: Անշուշտ, ինչպէս միշտ, Թուրքիան կը փորձէ որեւէ առումով չիմարացնել միջազգային հանրութիւնը:

Ատիկա շատ ըրած է Սուրիոյ, Իրաքի, Լիպիոյ պարագաներուն, եւ մշտապէս պատմած է PKK մարտիկներու պատմութիւնը: Մեր պարագային կ'ըսեն, որ իրենք այնտեղ են, որպէսզի պաշտպանեն միջազգային ուժանիւթի սահմանը: Ասիկա ամբողջովին անհետեւութիւն է: Այս միջազգային ուժանիւթի խողովակաշարերը, որ Պաքուէն ձէյհան կը հասնին, կառուցուած են 20 տարի առաջ: Եթէ Լեռնային Ղարաբաղի հայերը կամ Հայաստանը ուզէին անոնց ուղղութեամբ կրակել, ատիկա պիտի ընէին 20 տարի առաջ, այլ ոչ թէ հիմա: Եթէ մենք 20 տարի առաջ այդ կազատարի շահագործումը դադարեցնէինք, ուստի Ատրպէյճանը յաջորդ 20 տարիներուն միլիառաւոր տոլարներ չէր վատակեր եւ զինամթերք չէր գներ ու կրակեր հայերուն վրայ՝ սպաննելով զանոնք: Սակայն մենք ատիկա չըրինք:

Լեռնային Ղարաբաղի հայերը չկրակեցին այդ կազատարին վրայ, քանի որ մենք կը յարգենք միջազգային օրէնքները:

Ասիկա հակամարտութիւն է Ատրպէյճանի եւ հայերու միջեւ, որոնք կը մտածեն, որ ինքնորոշման իրաւունք ու նին, ճիշդ այնպէս, ինչպէս ունին մնացեալ բոլոր ազգերը, ինչպէս նախկին Հարաւսլավիոյ պետութիւնները, Սկովտիան:

Լեռնային Ղարաբաղի հայերը

կ'ըսեն, որ օրէնքի համաձայն հանրաքուէ իրականացուցած են: Այս ամէնուն Ատրպէյճանի պատասխանը միջնադարեան պատասխան է՝ պատերազմ, փոխանակ ըլլար այդ մարդոց կամքը յարգելը:

3.- Ինչպիսի՞ ապագայ կը տեսնէք: Հայաստանը ինչպէ՞ս կապուած է Լեռնային Ղարաբաղի հետ, պատասխանատուութիւն ունի՞ք անոնց նկատմամբ:

Պ.- Ի հարկէ: Եթէ Թուրքիան կ'ըսէ, որ որոշակի ցեղական կապեր ունի Ատրպէյճանի հետ, Լեռնային Ղարաբաղի մէջ կ'ապրին նոյն հայերը. պատմականօրէն Հայաստանը աւելի մեծ եղած է: Անոնք հայեր են, որոնք կ'ապրին այնտեղ հազարաւոր տարիներ: Ոչ միայն Հայաստանի մէջ ապրող հայերը, այլ ամբողջ աշխարհի հայերը պատասխանատուութիւն ունին, քանի որ եթէ մենք ատրպէյճանական կողմին արտօնէք ցեղական գտումներ իրականացնել, ուստի կը կատարուի այն, ինչ եղաւ Օսմանեան կայսրութեան մէջ 1915-ին, երբ հայերը ուղղակի ոչնչացուեցան եւ քշուեցան իրենց պատմական հայրենիքէն: Անոնց տունները, եկեղեցիները, քաղաքները ոչնչացուած են եւ չկայ հայկական մշակույթ: Ոչ միայն 1,5 միլիոն մարդ նահատակուած է, այլ նաեւ հսկայական մշակութային ժառանգութիւն, մշակույթ ոչնչացուած է: Կրնա՞ք արդեօք արտօնել, որ այդ պատմութիւնը կրկնուի:

3.- Կ'ընդունի՞ք արդեօք ՄԱԿ-ի խաղաղապահ առաքելութիւնը կամ ՄԱԿ-ի Անվտանգութեան Խորհուրդի բանաձեւը հրադադարի մասին:

Պ.- Այդ հարցը 26 տարուայ պատմութիւն ունի: Մշտապէս քննարկուած է ՄԱԿ-ի խաղաղապահ առաքելութեան հարցը: Սակայն երկու կողմերը, 26 տարուան ընթացքին, քիչ թէ շատ հասցուցած են ապրիլ հրադադարի պայմաններու մէջ, որ քանի մը առիթով խախտուած է: Երկու կողմերը ընդունակ են նստելու եւ բանակցելու: Եթէ ատիկա չըլլար, պիտի ըսէի, որ բանակցիլ հնարաւոր չէ, Ռուսիոյ կամ այլ ուժերու պիտի ըսէինք՝ եկէք կանգնինք անոնց միջեւ: Այս պահուն կայ միջազգայնօրէն ճանչցուած կազմակերպութիւն՝ ԵԱՀԿ Մինսքի խումբը: Կայ նաեւ ՄԱԿ-ը:

Եթէ այս կազմակերպութիւնները հանդէս գան առաջարկներով, ուստի առաջին հերթին պէտք է դիմեն ատրպէյճանական կողմին, որ վերսկսած է այս ռազմական գործողութիւնները: Հայերը նոյնիսկ չեն ալ մտածած նման գործողութիւններ սկսելու մասին: Լեռնային Ղարաբաղի, Հայաստանի մէջ 27 Սեպտեմբերին ոչ ոք կը մտածէր Ատրպէյճանի հետ պատերազմելու մասին: Այդպիսով, եթէ ՄԱԿ-ը, ԵԱՀԿ-ը, ԵՄ-ն, ՆԱԹՕ-ն, որուն անդամ է Թուրքիան, ճնշում գործադրեն Ատրպէյճանի վրայ՝ դադարեցնելու ռազմական գործողութիւնները, հայերը պիտի ըլլան առաջինը, որ պիտի համաձայնին ատոր հետ:

www.massisweekly.com Updated Every Friday



# Քալիֆորնիոյ Ռաստիարակները Կ'ըսեն Քուէարկեցէք

# Այո **Prop 16**ին

Անցընելով Prop. 16ը՝ մենք պիտի կարենանք արգելք հանդիսանալ խտրականութեան եւ բոլորին համար վերահաստատել հաւասար հնարաւորութիւններ: Ռաստիարակներ կը հաւատան, որ ամէն անձ, անկախ իր ցեղային եւ սեռային պատկանելիութենէն, արժանի է յաջողութեան հաւասար իրաւունքի: Հաճեցէք միանալ Քալիֆորնիոյ դաստիարակներուն՝ քուէարկելով Այո Prop. 16ին՝ կառուցելու ուժեղ տնտեսական ապագայ մը կիներուն եւ ոչ-սպիտակամորդ համայնքներուն համար:

CTA-ի նախագահ Է. Թոպի Ռոյսո



Իմացէք ասելին՝  
**VoteYesOnProp16.org**  
 կայքին վրայ

Ծանուցումը վճարուած է Educators for Equity, Yes on 15 and 16. Sponsored by California Teachers Association: Յանձնախումբի գլխաւոր ֆինանսատրամբ՝ California Teachers Association  
 -ի կողմէ:  
 Ֆինանսատրաման մանրամասնութիւններ՝ [www.fppc.ca.gov](http://www.fppc.ca.gov) կայքին վրայ:

